

ԱՍԽԷ ԼՈՒՍԺՈՂԿՈՐԾՑ  
ՏԱՐԲԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

---

---

ԾՐԱԳՐԱՅԻՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ  
ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ  
ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

---

1934—35 ՈՒՍ. ՏԱՐԻ

371  
5-98

ԲԱԳՈՒ—1934

MAR 2010

16 MAY 2013

ԱՍՆԷ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՕՑ

ՏԱՐՐԱԿԱՆ ՁԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

374  
5-38

W

1008  
38627

3340

ԾՐԱԳՐԱՅԻՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ  
ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ  
ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1934—35 ՂԻՍ. ՏԱՐԻ



## ԾՐԱՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿՈՆՖԵ- ՐԱՆՍՆԵՐԻՆ

Նոր ուսումնական տարուն որինակելի և բազմակողմանի նախապատրաստվելու նպատակով ԱՍՈՀ դպրոցներում պարապ-  
մունքները հետաձգվում են մինչև սեպտեմբերի 15-ը: Դրա հե-  
տևանքով սեպտեմբերի 5—15-ը բոլոր շրջաններում հրավիր-  
վում են ուսուցչական կոնֆերանսներ, վորտեղ քննության կառ-  
նային 1934—35 ուս. տարվա ուսումնական պլանները, ծրագրերը  
և այդ ծրագրերով աշխատելու խնդիրը:

1933—34 ուս. տ. տարրական և միջնակարգ դպրոցներն աշ-  
խատելով ստարիլ դասադրքերով և ծրագրերով, դպրոցում հան-  
րակրթական գիտելիքների մակարդակի բարձրացման գործում  
հասել են խոշոր հաջողությունների, սակայն բավականանալ այդ  
հաջողություններով չի կարելի այն հասարակ պատճառով, վոր  
մինչև հիմա դեռ դպրոցը չի վերացրել «արմատական թերություն  
ներ»: Հետևապես հիմնական առարկաներից աշակերտներին գի-  
տելիքների ճշգրիտ սահմանված ծավալ տարը պահանջում է դրպ  
րոցում բոլոր առարկաների ավանդման գործը համապատասխան  
հունի մեջ դնելու ել ավելի խորացրած աշխատանք:

Ծրագրերի հարմարեցումը խորհրդային պոլիտեխնիկ դպրո  
ցի պահանջներին կենտրոնի 1932 թ. ոգոստոսի 25-ի վորոշման  
իրականացման հիմնական խնդիրներից մեկն է:

Անցած ուսումնական տարում մի շարք դպրոցներում մաթե-  
մատիկայի, Փիզիկայի, քիմիայի, աշխարհագրության և պատ-  
մության ծրագրերի դասընթացը չի անցված, ծրագրերը նյութե-  
րով ծանրաբեռնված և նրանց աշակերտների տարիքային առանձ-  
նահատկություններին անհամապատասխան լինելու պատճառով:

ՈՍՀՄ-ի Ժողկոմխորհի և կենտրոնի 1934 թ. մայիսի 16-ի՝  
պատմության և աշխարհագրության դասավանդման մասին կա-  
յացրած պատմական վորոշումը մատնանչեց այդ առարկաների  
ծրագրերի հիմնական թերությունները, այդ թերությունները  
չպետք է կրկնվեն նոր ուսումնական տարվա ծրագրերում: Այս-

տեղից ել պարզվում և 1934-35 ուսումնական տարվա ծրագրեր-  
րում կատարած փոփոխությունների նշանակությունը: Դառնա-  
լով այդ փոփոխությունների բնույթին, անհրաժեշտ և մատնա-  
նշել հետևյալը:

### ԼԵԶՈՒ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նոր ուսումնական պլաններում լեզվի և գրականության ժա-  
մերի ավելացումը բոլոր դասարաններում գլխավորապես վերո-  
հիշյալ պատճառների հետևանքն է:

Տարրական դպրոցի ուսումնական պլաններում լեզվի և գրա-  
կանության ժամերի ավելացումը (տարեկան 400 ժամ) բոլոր դա-  
սարաններում ապացուցում են խորհրդային դպրոցի կողմից այդ  
առարկային տրվող նշանակությունը:

Ավելացված ժամերը գլխավորապես պետք է ոգտագործվեն  
անհրաժեշտ քերականական որենքների կրկնողության և հիշողու-  
թյան մեջ ամրապնդելու վարժությունների համար:

Լեզուների ծրագրերը դպրոցների համար հրատարակվել են  
1933 թ. այդ ծրագրերը տարբերվում են նախորդ տարիների ծր-  
ագրերից նյութերի վորոշ սխտեմատիկ դասավորմամբ, վորը  
ապահովել է լեզվի դասընթացի սխտեմատիկ անցումն աշակերտ  
ների կողմից:

Այդ ծրագրերի հիման վրա ամբողջ տարվա ընթացքում տա-  
րած աշխատանքն ապացուցեց նրանց ընդհանուր կառուցման ճշր  
տությունը, հայտնաբերելով միաժամանակ եյական թերություն-  
ներ, ինչպիսին են՝ ծրագրային նյութի ծանրաբեռնվածությու-  
նը, վորը դասատվին հնարավորություն չէր տալիս նյութի կըրկ  
նողությանը և ամրապնդմանը հատկացնել վորոշ ժամանակ:

Ծրագրի վորոշ մասերի աշակերտների տարեցային առանձ-  
նահատկություններին անհամապատասխան լինելը:

Ծրագրի վորոշ բաժինների նյութերի դասավորման սխտեմա-  
տիկայի անբավարար լինելը:

Տարրակն դպրոցում լեզվի դասերին ղեղադրություն մտցնե-  
լու ցուցմունքի բացակայությունը:

Ուղղադրության և վորձարանական մոմենտների անհրաժեշտ  
չափի բացակայությունը:

Ուսումնական պլաններում լեզուն և գրականությունն իր  
տեսակարար կըռով գրավում է տարրական և միջնակարգ դըրպ-  
րոցներում առաջին տեղը, այստեղից ել առաջ է դալիս լեզվի  
ծրագրի վերանայելու անհրաժեշտությունը հետևյալ հիմնական  
ուղիներով՝

Կառուցել ծրագրերը համեմատական լեզվադիտության ասպա-  
րիզում ստուգված նորագույն գիտական նվաճումների հիման  
վրա:

Մահմանել ստուգված միակ գիտական տերմինոլոգիան:  
Գրականության ծրագրերները պետք է կառուցվեն հետևյալ  
հիմունքներով՝

ա) Գրական գրվածքների ընտրության համար ճշգրիտ պատ-  
մական ժամանակաշրջանների սահմանումը:

բ) Աշակերտներին տալու համար նախատեսված գրական  
գրվածքների ձևի և բովանդակության արժեքության և նրանց  
տարիքին համապատասխան լինելու վորոշումը:

գ) Գրական «ժառանգության» և ժողովրդական բանավոր  
տեղեղծագործության տեսակարար կըռի վորոշումը ծրագրում:

դ) Գրականության գրականության ընտրությունը:

ե) Նախապատրաստական գիտության և բանաստեղծության  
դասընթացի սխտեմատիկ ավանդման տեղի վորոշումը:

զ) Գրականության և պատմական առարկաների կապի ճշտու-  
մը:

է) Ծրագրերի ճոխացումը դրոյի պատմա - կենսագրական  
տեղեկությունների ուսումնասիրությամբ:

Ծրագրերի վերանայման աշխատանքը Լուսժողովատը պետք  
է վերջացնի մոտ ապագայում: Այդ աշխատանքը կարող է հա-  
ջող տարվել միայն համապատասխան գիտական հիմնարկների և  
ուսուցչական ակտիվի մասնակցությամբ:

### ՌՈՒՍՍ ԼԵԶՈՒ

Թուրքական և աղգային փոքրամասնությունների տարրա-  
կան և միջնակարգ դպրոցների աշակերտության գիտելիքները  
ուսաց լեզվից դեռ բավարար հաջվել չի կարելի:

Ուսաց լեզուն հաջող ավանդելու գործին արդելք հանդի-  
սացող հիմնական պատճառներից անհրաժեշտ է նշել հետևյալնե-  
րը՝

1. Նախորդ տարիներում ուսաց լեզվին ուսումնական պլա-  
նով հատկացված ժամաքանակի անբավարար լինելը:
2. Ծրագրերի ուսումնական նյութերի անչափ ծանրաբեռ-  
նված լինելը, վորը հասցնում էր առարկայի մակերեսային ու-  
սումնասիրությանը և չէր ապահովում գիտելիքների և ունակու-  
թյունների ամրապնդումն ու կրկնողությունը:
3. Դասագրքերի թերությունները՝ հորվածների մեծամասնա-  
յլ լինելը, քերականական վարժությունների անբավականաչափ լի-

ները, կրթական մակարդակին նյութերի անհամապատասխան լի ները և վերջապես՝

4. Ռուսաց լեզվի ավանդման մեթոդիկայի անմշակ լինելը (վոչ ուսուցանող դպրոցում) :

Գալիք 1934-35 ուս. տարին պետք է բեկում մտցնի վոչ ուսական դպրոցներում ուսուցող լեզվի ավանդման և ուսուցող լեզվից աշակերտների զիտելիքների բարձրացման գործում :

1934-35 ուս. տարվա ուսումնական պլաններում բոլոր դասարաններում ավելացված են ուսուցող լեզվի համար նախատեսված ժամերը . ժամաքանակի ավելացումը հնարավորություն կտա մշակելու անցած տարուց մնացած թեմաները, բացի դրանից, բավականաչափ բեռնաթափված է 5-րդ դասարանի ծրագրի ճերականական բաժինը և ծրագրային նյութերի վորոշ մասը փոխադրվում է 6-րդ դասարան : Հետևապես 6-րդ, 7-րդ և 8-րդ դասարանների ծրագրերի նշված բաժինը բարձրացվում է մի դասարանով վեր, վորի հետևանքով ծրագրային նյութերի դասավորումը համապատասխանում է աշակերտների զիտելիքների փաստական մակարդակին :

Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի անմշակ լինելը և դասագրքերում յեղած թերությունները խնդիր են դնում ուսուցչության առաջ սխառեմատիկ և համառորեն աշխատելու իրենց մեթոդական վարպետությունը բարձրացնելու համար : Այդ գործը բավականաչափ կթեթևացվի համապատասխան մի շարք ծրագրային-թեմաների մեթոդական մշակումների հրատարակման միջոցով :

### ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Լեզվից և գրականությունից հետո մաթեմատիկան խորհրդային դպրոցում գրավում է յերկրորդ տեղը : Մաթեմատիկայի դասավանդման դրումից խոշոր չափով կախված է դպրոցի հանրակրթական աշխատանքի վորակը և մասնավորապես Ֆիզիկո-քիմիական առարկաների ավանդումը :

Չնայած դպրոցներում մաթեմատիկայի ուժեղացման գործում վերջին 2-3 տարիների ընթացքում կատարած աշխատանքներին, 1934-35 ուս. տարվա պլաններում և ծրագրերում այդ առարկայի դերն ավելի ուժեղացնելու համար մտցրված են հետևյալ փոփոխությունները .

Տարրական դպրոցում ամեն մի դասարանի 4-րդ քառորդի նյութերը տեղափոխվում են հաջորդ դասարանը :

Միջնակարգ դպրոցի նախկին ծրագրի ծանրաբեռնվածություն և ժամերի պակասություն պատճառով ուսուցչից զուրկ եր

նյութերի կրկնողություն, աշխատանքին խնդիրներ լուծելու և Տչդրիտ մաթեմատիկական լեզվին տիրելու ունակություններ տալու պայմաններից :

Ամենաչատ երական կրճատման և յենթարկվել 10-րդ դասարանի ծրագրերը, նրանից հանված են բարձրագույն մաթեմատիկայի տարրերը և նրանց փոխարեն տրվում է ելեմենտար մաթեմատիկայի դասընթացի խորացած կրկնողությունը :

Հետևապես, 5 տարվա համար նախատեսված նյութը, այսինքն՝ սկսած 5-րդ դասարանից մինչև 9-րդ դասարանը ներառյալ բաշխվում է վեց տարվա մեջ (5-10-րդ դասարանները) :

### ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրության ծրագիրը, համաձայն ԽՍՀՄ-ի Ժողովուխորհի և կենտրոնի ս. թ. մայիսի 16-ի պատմական վորոշմանը, յենթարկված է հետևյալ փոփոխության .

Այսպես, 3-րդ և 4-րդ դասարանների ծրագրերում փոփոխություններն ապահովում են աշակերտության հիշողության մեջ ամրապնդելու հիմնական աշխարհագրական անունները (յերկրների, գետերի, ծովերի, լեռների, քաղաքների և այլն) և աշխարհագրական քարտեզի հաստատուն յուրացումը :

5-րդ դասարանում — Ֆիզիկական աշխարհագրության ծրագիրը հիմնականում մնում է նույնը : Վորոշ չափով փոփոխություն է յենթարկված առանձին թեմաների ուսումնասիրության հաջորդականությունը և կոնկրետացման է յենթարկված դասընթացի ուսումնական նյութերը, յեյնելով աշակերտության տարիքային առանձնահատկություններից :

6-րդ դասարանում — տրվում է աշխարհամասերի Ֆիզիկո-աշխարհագրական տեսությունը (Յելլոպա, Ասիա, Ամերիկա, Աֆրիկա, Աստորալիա) և հիմնական տեղեկություններ աշխարհի ամեն մի մասի կարևորագույն պետությունների մասին (քաղաքական իրավակարգ, Ժողովրդական տնտեսություն և այլն) :

7-րդ դասարանում — տրվում է ԽՍՀՄ-ի ընդհանուր Ֆիզիկո-աշխարհագրական տեսությունը : Այստեղ ծրագրի նախատված և տնտեսական և վիճակագրական մանրամասնություններից և միաժամանակ ընդլայնված է ամեն մի հանրապետության, յերկրի ու մարզի աշխարհագրական բնութագրումը (գետերի, լճերի, ծովերի, կլիմայի, բույսերի ու կենդանիների նկարագրություն, խոշորագույն քաղաքների, յերկաթուղիների ու խճուղիների բրնութագրում և այլն) :

8-րդ դասարանում — Առաջին կիսամյակում պետք է անցվի ավելի բայն ծավալով ԽՍՀՄ-ի Ֆիզիկական աշխարհագրու-

Թյունը, փակ յերկրորդ կիսամյակում՝ ԽՍՀՄ-ի տնտեսական աշխարհագրութեան մասնաճյուղային մասը:

9-րդ դասարանում — Ուսումնասիրվում է կապիտալիստական յերկրների տնտեսական աշխարհագրությունը:

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Պատմութեան նախկին ծրագրերն իրենց վերացական և սխեմատիկ բնույթով, «վերացական սոցիոլոգիական սխեմաներ» պարունակող դասագրքերը, փոխանակ քաղաքացիական պատմությունը կենդանի, գրավիչ ձևով ավանդելու, շարահյուսելով կարեկորագույն դեպքերն ու փաստերն իրենց ժամանակագրական հաջորդականութեամբ, պատմական գործիչների բնութագրութեամբ, շատ դեպքերում չէլին համապատասխանում աշակերտների տարիքին: Պատմութեան դասավանդման անբավարար դրուժը ցարտուն կերպով հայտնաբերված է ԽՍՀՄ-ի Ժողովրդական և Կենտրոնի ս. թ. մայիսի 16-ի պատմական «Քաղաքացիական պատմութեան դասավանդելու մասին» վերջին մեջ:

Աշակերտների կողմից պատմական նյութերի յուրացման մեջ հիմնական թերությունները հետևյալներն են:

Պատմական փաստերը չիմանալը: Հաճախակի պատմական դեպքերը և դեմքերը փոխարինվում են ին մերձ սխեմաներով, արատրակտ սահմանումներով, վորոնցից աշակերտները վոչինչ չեն հասկանում: Ժամանակագրական հաջորդականութեան վատ յուրացումը, պատմական քարտեզին մոտենալու և աշխատանքի ընթացքում ոգտագործելու ունակութեան բացակայությունը: Պատմական յերևութիւնների պատճառի-հետևանքի կապի չհասկանալը և այլն:

Վերոհիշյալ թերությունները վճռականորեն վերացնելու նըպատակով պատմութեան ծրագրի մեջ մտցրված են հետևյալ փոփոխությունները:

5-րդ դասարանում — Կրճատվում է «նախնական հասարակություն» բաժինը, փակ «Հոռմի պատմությունը» տեղափոխվում է 6-րդ դասարանը:

6-րդ դասարանում — դասընթացն սկսվում է «Հոռմի պատմություն» բաժնից և վերջանում է «Սաչակրած արչափանքներով»:

7-րդ դասարանում — շարունակվում է միջնադարյան պատմությունը «խաչակրած արչափանքների» ժամանակաշրջանից հետո և վերջանում է «Անդլիական հեղափոխութեամբ»:

«Արդյունաբերական հեղաշրջում» և «Ճրանսիական մեծ հեղափոխություն» թեմաները տեղափոխվում են 8-րդ դասարանը:

6-րդ և 7-րդ դասարանների դասընթացներից հանվում է «ԽՍՀՄ-ի Ժողովուրդների և Ռուսաստանի պատմությունը»:

8-րդ և 9-րդ դասարաններում — ԽՍՀՄ-ի և նոր պատմութեան դասընթացները շարունակվում են անցյալ ուսումնական տարում անցած նյութերի հիման վրա: Այդ յերկու դասընթացները տարվում են ինքնուրույն:

### ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բավականաչափ փոփոխութեան է յենթարկված հասարակագիտութեան ծրագրը: Ուսումնական սլանում 1-ին և 2-րդ դասարաններում հասարակագիտութեանը ժամեր չի հատկացրված, այդ դասարաններում տարվում են դրույցներ դասադրքում տրված պատմվածքների և վոտանավորների թեմաներով:

3-րդ և 4-րդ դասարանների ծրագրերը դադարիար են տալիս այդ տարիքի աշակերտութեան անհատական և հասարակական բը նավորութեան ճիշտ կազմակերպման և հասարակական-քաղաքական դեպքերի մասին (աշակերտների հատկացողութեան համապատասխան):

5-րդ և 6-րդ դասարաններում աշակերտները ծանոթանում են Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի կյանքի ու գործունեյութեանը, միաժամանակ կենդանի որինակների և կոնկրետ փաստերի հիման վրա խորհրդային կոնստիտուցիայի հետ:

7-րդ դասարանում — ուսումնասիրվում է մեր հաղթությունների պատմությունը: Այդ նյութն ամբողջապես պետք է արվի կենդանի, դեղարվեստական ձևով, բերելով անհրաժեշտ փաստեր ու բնութագրելով:

Հասարակագիտութեան ժամերը, համեմատած անցյալ տարվա հետ, զգալի չափով կրճատված են:

### ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տարրական դպրոցի բնագիտութեան ծրագրում այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ «Անտառն ամառը» (2-րդ դասարան), «Բույսերի կյանքը» (4-րդ դասարան) հանվում են:

5-րդ և 6-րդ դասարաններում — բուսականութեան և կենդանական աշխարհի նյութերն ավելի յեն սխեմատիկացրած յենթարկված մինչ փոփոխութեան յենթարկված ծրագրի հետ: Բույսերի բջիջների ուսումնասիրութեանը հատկացված է ավելի շատ ժամեր:

«Կենդանաբանութեան ներածություն» թեմայից (6-րդ դասարան) «Յերկրի պատմություն» նյութը, վորպես աշակերտների

գիտական մակարդակին անհամարատասխան և դասընթացի յուրացմանը չափակցող նյութ, հանված է:

7-րդ դասարանում — սահմանափակվել միայն «Յեղրակացու թյուն» բաժնի առաջին թեմայի ուսումնասիրությամբ:

8-րդ դասարանում — մարդու անատոմիայի և բնախոսության բաժնից «Վոսկրային և մկանային սխտեմ» թեմայից հանվում է մկանային աշխատանքի քիմիոլոգիա, վորպես աշակերտների համար դժվար ըմբռնելի և անհասկանալի:

9-րդ դասարանում — մինչ «Եվոլյուցիոն» տեսությունն դասընթացը մտցնելում է «Յերկրի կեղևի պատմության հիմունքները» թեման:

10-րդ դասարանում — նորից մտցնելում են յերկրաբանության և հանքաբանության դասընթացները:

### Ք Ի Մ Ի Ա

Քիմիայի ծրագրի սքեման մնում և նույնը: 6-րդ դասարանից քիմիան 7-րդ դասարանը մտցնելու պատճառով հետագա դասարաններում մտցնելում են կրկնողության ելեմենտներ և այդ խոկ պատճառով ել ծրագրային նյութերը վորոչ չափով կրճատված են:

Դպրոցների աշխատանքի պրակտիկան ցույց է տվել, վոր քիմիայի դասատուները չեն կատարում ծրագրում նշված լաբորատոր աշխատանքների և դեմոնստրացիաների մինիմումը, հետևյալս քիմիայի դասատուները և դպրոցի ղեկավարները պետք է հիշեն, վոր քիմիայի դասավանդումն առանց լաբորատոր աշխատանքների և դեմոնստրացիաների, ըստ էյության, դնահատվելու չէ վորպես ծրագրի չկատարում:

### Ֆ Ի Զ Ի Կ Ա

Հաշվի առնելով աշակերտների տարիքային առնձնահատկությունները և գիտական մակարդակն առանձին առարկաներից (որինակ՝ մաթեմատիկայից), Ֆիզիկան 5-րդ դասարանից փոխադրվում է 6-րդ դասարանը:

Ուսուցիչը լուրջ ուշադրություն պետք է դարձնի՝ վորպես դժվար յուրացվող 6-րդ դասարանի «Նյուտոնի որենքները և շարժման ակիդրը», 7-րդ դասարանի «Յերկրաչափական տեսագիտություն և լույսի դիսպերսիան», 8-րդ դասարանի «Տատանումներին» և 9-րդ դասարանի «Կինետիկ հոսանքի տեսության և գազի աշխատանքի բաժինների վրա»:

### ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխատանքի ծրագրում տրված է աշակերտներին հետաքրքրող աշխատանքային պրոցեսների կոնկրետ ձևերը: Աշխատանքի դասավանդման ընթացքում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել Ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի և գծագրության առարկաների հետ կապ ստեղծելու խնդրին: Աշխատանքի ծրագրի փոփոխության հետևանքով ուսումնական պլանում նախատեսված ժամերը բավականաչափ քչացրված են:

Բայց այդ չի նշանակում, վոր ուսուցման գործում աշխատանքի նշանակությունը իջեցված է, այլ ժամերի քչացումը հետևյալս է ծրագրի արհեստական տեսականացման և ավելորդ շատխոսության մասերի աղատումից:

Որոհրդային պոլիտեխնիկական դպրոցները յերկրորդ տարին են աշխատելու ստարիլ դասագրքերով: Անցած տարիվա թերությունները՝ դասագրքերի թերազնահատումը կամ ընդհակառակը, աշակերտի համար դասագրքերը գիտություն ձևոք բերելու միակ աղբյուրը դարձնելը պետք է վերացնել, ամեն մի ուսուցիչ ամբողջ ուսումնական տարիվա ընթացքում, պիտի ուսումնասիրի ստարիլ դասագրքը, անալիզի յենթարկի, ստուգի գործնական աշխատանքի ընթացքում, վորպեսզի հետագայում աշակցի Լուստողիմատին դասագրքերի թերությունները վերացնելու համար:

Ծրագրի փոփոխության հետևանքով դասագրքերի ճիշտ ոգտագործումը սույն ուսումնական տարում ստանում է խոշոր նշանակություն:

1934-35 ուսումնական տարում դպրոցներում ոգտագործվելու յեն 1933 և 1934 թ.թ. հրատարակած դասագրքերը: Սույն տարում հրատարակած դասագրքերը պարունակում են բավակա նի փոփոխություններ, ուսուցիչը պետք է ծանոթ լինի այդ փոփոխությունների հետ, վորպեսզի կարողանա կենտրոնացնել դըրանց վրա 1933 թ. հրատարակած դասագրքերն ոգտագործող աշակերտների ուշադրությունը:

Նոր ուսումնական տարին պետք է դառնա պետության և կուսակցության դպրոցի մասին հանած վորոշումների կիրառման և կոնկրետացման բեկման տարի, մասնավորապես ս. թ. մայիսի 16-ի վորոշման նկատմամբ: Դարիք ուսումնական տարում դպրոցըն առանց առարկության պետք է լիկվիդացիայի յենթարկի «արմատական քերությունը» և պայքարի բոլոր առարկաների որինակելի դրման համար:

Տարրական և միջնակարգ դպրոցների վարչության պետ՝ ՅՈՒ. ՀԱԶԻՅԵԿ

## ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

### 1934—35 ՈՒՍ. ՏԱՐՎԱ. ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Տարրական դպրոցի աշակերտության կրթական մակարդակը աշխարհագրությունից անցած 1932—33 ուս. տ. հետ համեմատած, սույն ուսումնական տարում վերջը չափով բարձրացել է: Այդ ապացուցվում է Լուսժողկոմատի կողմից դպրոցներում տարված 1934 թվի դարձյալ ընտրողական և տարեկերջի ստուգումների արդյունքները: Քննություն յենթարկված գյուղական մասսայական դպրոցների 748 աշակերտներից ստուգողական աշխատանքի ժամանակ քարտեզից բավարար արդյունքներ են ցուցադրել 654 աշակերտ (87 տոկոս) և միայն 94 աշակերտ (մոտավորապես 13 տոկոս) չեն կարողանում ոգտագործել քարտեզը: Ստուգման յենթարկված 79 դպրոցներից — 54 դպրոց միայն բավարար գիտելիքներ են տվել աշխարհագրության ամբողջ դասընթացից, և լրիվ կերպով մշակման են յենթարկել Լուսժողկոմատի կողմից առաջադրված աշխարհագրության ծրագիրը:

Դրա հետ միասին անհրաժեշտ է նշել, վոր աշխարհագրության ավարտումը տարրական դպրոցում դեռ աշակերտությանը չի տալիս կոնկրետ և կայուն գիտելիքներ:

Ստուգման յենթարկված 13 մասսայական դպրոցներում յերեւան է հանված քարտեզի վրա աշխատելու գործի անբավարար գրումը:

Բանավոր ստուգման յենթարկված 65 աշակերտներից 14 աշակերտ չկարողացան անվանել և ցույց տալ քարտեզի վրա հովհասի նավթահանման վայրերը:

Դասերի գրանցումներից ու կոնսպեկտներից, և տարեկերջի ստուգումներից պարզվել է, վոր շատ դասատուներ աշխարհագրության ավանդման ընթացքում նյութը ծանրաբեռնում են ընդհանուր-անտեսական հարցերով, ի միաս աշակերտների կողմից ֆիզիկական — աշխարհագրական գիտելիքների հաստատուն (կայուն) յուրացմանը:

Աշխարհագրության դասերին թույլ և անբավարար չափով է ոգտագործվում դիտողական պարագաները և բացի դրանից այդատարկացի ավանդումը շատ դեպքում տարվում է չոր, անհետաքրքիր և վերացական ձևով:

Ուսումնական տարվա ընթացքում ստուգման յենթարկված դպրոցների 7 տոկոսը, այսինքն, 41 դպրոցում աշխարհագրության վերաբերվող վոչ մի եքսկուրսիա չի կատարված, վորը ցարտուն կերպով ապացուցում է ուսումնասիրվող նյութի և կոնկրետ իրականության կապի բացակայությունը:

Աշխարհագրության ուսումնասիրության ընթացքում գեղարվեստական գրականությունը թույլ և շատ դեպքում բոլորովին չի ոգտագործվում: Միայն ստուգման յենթարկված դպրոցներից չցրտում դասատուները սխտեմատիկորեն աշխատանք են տարել աշխարհագրության դասերին գիրքն ոգտագործելու և ուսումնասիրվող նյութը գեղարվեստական գրականության հետ կապելու համար:

Աշխարհագրության դասընթացի յտրացմանը յանդարել և նույնպես և ծրագրի ծանրաբեռնվածությունը, վորի հետևանքով դասատուն սակաված է յեղել ամեն դասին աշակերտին տալ նոր տեղեկություններ, բորորովին ուղադրություն չդարձնելով անցած նյութի կրկնողությանը և անբաշխմանը:

Այդ բորը թերությունները ցարտուն կերպով հայտնաբերել են իՍՀՄ-ի Ժողկոմխորհը և Կենտկոմն իրենց հատուկ «Աշխարհագրության դասավանդման» վորոյման մեջ, վորտեղ մատնանշված է, վոր այդ թերություններից յտրագույններն են — «քացատրուքյան վերացական և չոր ու ցամախ յինյը, ֆիզիկո — աշխարհագրական նյութի անբավարարությունը, քարտեզի վրա բույլ կողմնորշումը, դասավանդման ու աշխարհագրության դասագրքերի վիճակագրական — տնտեսական նյութերով և ընդհանուր սյեմաներով ծանրաբեռնված յինյը, վորի հետևանքով սովորողները դպրոցներից յիլուում են հաճախ առանց տիրապետելու աշխարհագրական տարրական գիտելիքներին:

Հիշյալ թերությունները վերացնելու համար իՍՀՄ-ի Ժողկոմխորհն ու Համկոմկուսի (ք) Կենտկոմն առաջարկել են «վերանայել տարրական և միջնակարգ դպրոցների աշխարհագրության դասագրքերն ու ծրագրերը և տարրական դպրոցում (3-րդ և 4-րդ դասարաններ) աշխարհագրություն ուսումնասիրելիս ապահովել, վոր սովորողների հիշողության մեջ ամրապնդվեն հիմնական աշխարհագրական անունները (յերկրների, գետերի, ծովերի, լեռների, քաղաքների և այլն) և նրանք հաստատույնս յիմանան աշխարհագրական քարտեզը ծրագրի նշանակված սահ-



## ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

### 1934—35 ՈՒՍ. ՏԱՐՎԱ. ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Տարրական դպրոցի աշակերտության կրթական մակարդակը աշխարհագրությունից անցած 1932-33 ուս. տ. հետ համեմատած, սույն ուսումնական տարում վորոշ չափով բարձրացել է: Այդ ապացուցվում է Լուսժողկոմատի կողմից դպրոցներում տարված 1934 թվի դարձան ընտրողական և տարեկերջի ստուգումների արդյունքները: Քննության յենթարկված դյուղական մասսայական դպրոցների 748 աշակերտներից ստուգողական աշխատանքի ժամանակ քարտեզից բավարար արդյունքներ են ցուցադրել 654 աշակերտ (87 տոկոս) և միայն 94 աշակերտ (մոտավորապես 13 տոկոս) չեն կարողանում ոգտագործել քարտեզը: Ստուգման յենթարկված 79 դպրոցներից — 54 դպրոց միայն բավարար գիտելիքներ են սովել աշխարհագրության ամբողջ դասընթացից, և լրիվ կերպով մշակման են յենթարկել Լուսժողկոմատի կողմից ստաջադրված աշխարհագրության ծրագիրը:

Դրա հետ միասին անհրաժեշտ է նշել, վոր աշխարհագրության ավարտումը տարրական դպրոցում դեռ աշակերտությանը չի տալիս կոնկրետ և կայուն գիտելիքներ:

Ստուգման յենթարկված 13 մասսայական դպրոցներում յենթարկման է հանված քարտեզի վրա աշխատելու գործի անբավարար դրումը:

Բանավոր ստուգման յենթարկված 65 աշակերտներից 14 աշակերտ չկարողացան անվանել և ցույց տալ քարտեզի վրա կոսկասի նավթահանման վայրերը:

Դասերի դրանցումներից ու կոնսպեկտներից, և տարեկերջի ստուգումներից պարզվել է, վոր շատ դասատուներ աշխարհագրության ավանդման ընթացքում նյութը ծանրաբեռնում են ընդհանուր-անտեսական հարցերով, ի մաս աշակերտների կողմից Ֆիզիկական — աշխարհագրական գիտելիքների հաստատուն (կայուն) յուրացմանը:

Աշխարհագրության դասերին թույլ և անբավարար չափով են ոգտագործվում դիտողական պարագաները և բացի դրանից այդ առարկայի ավանդումը շատ դեպքում տարվում է չոր, անհետաքրքիր և վերացական ձևով:

Ուսումնական տարվա ընթացքում ստուգման յենթարկված դպրոցների 7 տոկոսը, այսինքն, 41 դպրոցում աշխարհագրության վերաբերվող վոր մի եքսկուրսիա չի կատարված, վորը ցայտուն կերպով ապացուցում է ուսումնասիրվող նյութի և կոնկրետ իրականության կապի բացակայությունը:

Աշխարհագրության ուսումնասիրության ընթացքում գեղարվեստական գրականությունը թույլ և շատ դեպքում բոլորովին չի ոգտագործվում: Միայն ստուգման յենթարկված դպրոցներից չորսում դասատուները սիստեմատիկորեն աշխատանք են տարել աշխարհագրության դասերին գիրքն ոգտագործելու և ուսումնասիրվող նյութը գեղարվեստական գրականության հետ կապելու համար:

Աշխարհագրության դասընթացի խորացմանը խանգարել է նույնպես և ծրագրի ծանրաբեռնվածությունը, վորի հետևանքով դասատուն ստիպված է յեղել ամեն դասին աշակերտին տալ նոր տեղեկություններ, բոլորովին ուշադրություն չբարձնելով անցած նյութի կրկնողությանը և ամրապնդմանը:

Այդ բոլոր թերությունները ցայտուն կերպով հայտնաբերել են ԽՍՀՄ-ի Ժողրոմխորհրդի և Կենտկոմի իրենց հատուկ «Աշխարհագրության դասավանդման» վորոշման մեջ, վորտեղ մատնանշված է, վոր այդ թերություններից խոշորագույններն են — «բացատրության վերացական և չոր ու ցամաք լինելը, ֆիզիկո — աշխարհագրական նյութի անբավարարությունը, քարտեզի վրա քույլ կողմնորոշումը, դասավանդման ու աշխարհագրության դասագրքերի վիճակագրական — տնտեսական նյութերով և ընդհանուր սյեմաններով ծանրաբեռնված լինելը, վորի հետևանքով սովորողները դպրոցներից յեղում են հանախ առանց տիրապետելու աշխարհագրական տարրական գիտելիքներին:

Հիշյալ թերությունները վերացնելու համար ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհն ու Համկոմկուսի (ը) Կենտկոմն առաջարկել են «վերանայել տարրական և միջնակարգ դպրոցների աշխարհագրության դասագրքերն ու ծրագրերը և տարրական դպրոցում (3-րդ և 4-րդ դասարաններ) աշխարհագրություն ուսումնասիրելիս ապահովել, վոր սովորողների հիշողության մեջ ամրապնդվեն հիմնական աշխարհագրական անունները (յերկրների, գետերի, ծովերի, բոնների, քաղաքների և այլն) և նրանք հաստատապես իմանան աշխարհագրական քարտեզը ծրագրի նշանակված սահ-

մաններում, ձգտելով նրան, վոր բացատրությունն առկելի դե-  
տողական մատչելի, հանրամատչելի ու դրամիչ լինի:

Ծրագրային նյութի բեռնաթափման, նրա սխտեմատիզա-  
ցիայի և աշխարհագրության դասընթացը աշակերտության տա-  
րիքային առանձնահատկություններին հարմարեցնելու նպատա-  
կով և, վոր նոր՝ 1934-35 ուսումնական տարում ծրագիրը յեն-  
թվարկվում և հետևյալ փոփոխության:

### 3-րդ ԴԱՍԱՐԱՆ

1. 6-րդ բաժին «Յերկրագունդ և նրա պատկերելը գլոբուսի  
ու կիսագնդերի քարտեզի վրա» բաժանել յերկու ինքնուրույն  
բաժինների:

ա) Առաջին բաժին նույն վերնագրով («Յերկրագունդ և նրա  
պատկերելը գլոբուսի ու կիսագնդերի քարտեզի վրա»), վորի  
մեջ են մտնում 1932-33 թ. թ. ծրագրերի 1, 2, 3, 4, 5, 6 կե-  
տերը:

բ) Յերկրորդ բաժին «Յուրտ, բարեխառն և տաք յերկր-  
ներ», վորի մեջ և մտնում ծրագրի 6-րդ բաժնի 7-րդ կետը:

2. 4-րդ բաժին «Յեղամակ և կլիմա» տեղավորել «Յերկրա-  
գունդ և նրա պատկերելը գլոբուսի ու կիսագնդերի քարտեզի  
վրա և «Յուրտ, բարեխառն և տաք յերկրներ» բաժինների ա-  
րանքում:

3. 7-րդ բաժին.— «Ինչպես եմ ապրում և ինչով եմ զբաղվում  
աշխատավորները մեր շրջանում, և մեր հանրապետութայն  
մեջ»:

Վորպես դժվարին և իր մեջ մեծ չափով տնտեսական աշ-  
խարհագրական նյութեր պարունակող տարրական դպրոցի դաս  
ընթացից հանել, միաժամանակ անհրաժեշտ համարել աշխարհա  
գրության դասընթացի տարրեր բաժինների մշակման ժամանակ  
տեղագրիտական նյութերի ոգտագործումը:

### 4-րդ ԴԱՍԱՐԱՆ

1. «ԽՍՀՄ-ի տեսությունն ըստ գոտիների» բաժնում  
չպահանջել աշակերտներից հիշելու ինքնավար հանրապետու-  
թյունները և վարչական մարզերը (այսինքն՝ «Տաւղրանների գո  
տու» թեմայի— 6-րդ կետը, «Տայգայի գոտու» — 10-րդ կետը,  
«Խառն անտառների գոտու» — 7-րդ կետը, «Անտառատափառու  
նային և տափաստանային գոտու» — 4-րդ կետը, «Անապատնե-  
րի գոտու» — 4-րդ կետը, «Բնության պատկերները և տնտեսու-  
թյան տիպիկ նյութեր լեռներում» թեմայի 5-րդ կետը:

2. «ԽՍՀՄ-ի քաղաքական տեսության բաժնում չպահան-  
ջել աշակերտներից հիշելու ինքնավար հանրապետությունները և  
վարչական մարզերը (այսինքն՝ 3-րդ կետը):

Իր ուժի մեջ և մնում քարտեզի վրա աշխարհագրական դիր-  
քը և անունները հիշելու պահանջը ԽՍՀՄ-ի դաշնակցային հան-  
րապետությունների և նրանց կենտրոնների նկատմամբ:

Հանել 4-րդ դասարանի դասընթացից վերահիշյալ բաժնի  
4-րդ և 5-րդ կետերը (այսինքն՝ խտության մասին, քաղաքա-  
յին և գյուղական բնակչության տոկոսը և նրա կրած փոփոխու-  
թյունները):

3. «Աշխարհի քարտեզը» բաժինը կրճատել և հասցնել մինչև  
գլխավոր պետությունների և գաղութային յերկրների ամենա-  
կարճ տեսությանը քարտեզի վրա, առանց նրանց փորձե ծա-  
վարած բնութագրմանը:

Աշխարհագրական քարտեզը իմանալու և հիմնական աշխար-  
հագրական անունները հիշելու դիտելիքների ծավալի չափը սահ-  
մանվում և ստարելի դասագրքում տրված ծավալը, վորը ծանրա  
բեռնել վոչ մի դեպքում չի թուլատրվում:

Հետևապես աշխարհագրության դասընթացը տարրական  
դպրոցում վերահիշյալ փոփոխություններից հետո, կարելի յե  
պատկերել հետևյալ ձևով:

### 3-րդ ԴԱՍԱՐԱՆ

1. Կողմնորոշում տարածության մեջ (լրիվ ըստ 1932-33  
թ. թ. ծրագրերի):

2. Ծանոթություն տեղի ուղեգրի և արտագրական պլանի  
հետ (լրիվ ըստ ծրագրի):

3. Յերկրի մակերևույթի և գեոմային ջրեր (լրիվ ըստ ծը-  
րագրի):

4. Ծանոթություն քարտեզի հետ (լրիվ ըստ ծրագրի):

5. Յերկրագունդ և նրա պատկերելը գլոբուսի ու կիսա-  
գնդերի քարտեզի վրա (նույն բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ,  
5-րդ և 6-րդ կետերը):

6. Յեղամակ և կլիմա (լրիվ ըստ ծրագրի):

7. Յուրտ, բարեխառն և տաք յերկրներ (ծրագրի 6-րդ  
բաժնի 7-րդ կետը):

### 4-րդ ԴԱՍԱՐԱՆ

1-ին. ԽՍՀՄ-ի աշխարհագրական դիրքը, տարածությունը,  
սահմանները, մակերևույթի համառոտ տեսությունը (լրիվ ըստ  
ծրագրի):

2-րդ ԽՍՀՄ-ի տեսութիւնը ըստ գոտիների (ընդհանրապես ըստ ծրագրի) :

- ա) Բևեռային գոտի :
- բ) Տունդրանների գոտի (առանց 6-րդ կետի)
- գ) Տարալի գոտի (առանց 10-րդ կետի),
- դ) Խառն անտառների գոտի (առանց 7-րդ կետի),
- ե) Անտառատարատարանային և տարատարանային գոտի (առանց 4-րդ կետի) :
- զ) Մերձարևադարձային գոտի (լրիվ ըստ ծրագրի),
- է) Անապատների գոտի (առանց 4-րդ կետի) :
- ը) Բնութիւն պատկերներ և տնտեսութիւն տիպիկ ճյուղեր լեռներում (առանց 5-րդ կետի) :

3-րդ. ԽՍՀՄ-ի ընդհանուր տեսութիւն (լրիվ ըստ ծրագրի) :

4-րդ. ԽՍՀՄ-ի քաղաքական տեսութիւն (առանց 4-րդ ու 5-րդ կետերի և առանց ինքնավար հանրապետութիւնների ու վարչական մարզերի հիշելը) :

5-րդ. Գլխավոր պետութիւնների և դաղուծային յերկրների համարուող տեսութիւնը քարտեզի վրա :

### ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Յեշնելով 3-րդ և 4-րդ դասարանների աշխարհագրութիւնի ծրագրի վերահիշյալ փոփոխութիւններից, ուսուցիչը պարտավոր է ոգտագործել Լուսժողովարտի կողմից հաստատուած և հրատարակուած տարրական դպրոցի աշխարհագրութիւնի դասագրքերը :

Ուսուցիչը իր աշխատանքի պրոցեսում պետք է հիմք ընդունի և անչեղորեն ղեկավարի ԽՍՀՄ-ի Ժողովարտի և Կենտկոմի ս. թ. մայիսի 16-ի վորոչման մեջ տրուած ցուցմունքներով, վորի մեջ ասուած է, վոր «Տարրական դպրոցում (3-րդ և 4-րդ դասարաններ) աշխարհագրութիւն ուսուցանելիս անպահովել, վոր սովորողների հիշողութիւնի մեջ ամրաստուելն հիմնական աշխարհագրական անունները (յերկրների, դետերի, ծովերի, լեռների, քաղաքների և այլն) և նրանք հաստատուելս իմանան աշխարհագրական քարտեզը՝ ծրագրի նշանակած սահմաններում, հաջողեցնելով, վոր բացատրութիւնն ավելի դիտողական, մասնակցի, հանրամասնելի ու դրամիչ լինի :

Բացի դրանից, ղեկավարելով նույն վորոչմամբ, ուսուցիչը պարտավոր է արդեն սույն 1934-35 ուսում. տարում վերացնել աշխարհագրութիւնի դասավանդման այնպիսի խոշորագույն թեթութիւնները, ինչպես են՝ «բացատրութիւն վերացական և չար

ու ցամաք լինելը», «Փիզիկո-աշխարհագրական նյութի անբավարարութիւնը», «Բարտեզի վրա բույր կողմնորոշումը» և «դասավանդման ու աշխարհագրութիւնի դասագրքերի վիճակագրական-տնտեսական նյութերով և ընդհանուր սխեմաներով ծանրաբեռնված լինելը» :

Այս բոլոր թեթութիւնների դեմ պետք է պայքարել վոր լրիվ միջնակարգ դպրոցի բոլոր դասարաններում աշխարհագրութիւնի դասավանդման ժամանակ, բայց առաջին հերթին այդ թեթութիւնները պետք է վերացուել տարրական դպրոցում, ուր աշակերտների տարիքային առանձնահատկութիւնները պահանջուել են, վորպեսզի աշխարհագրութիւնի դասավանդումը տարվի ավելի կենդանի ձևով, դիտողական ու դրամիչ և լրիվ չափով համապատասխանի այդ դասարանների աշակերտներին ու նրանց տարիքին :

Յեշնելով այն հանդամանքից, վոր սույն ուսումնական տարում տարրական դպրոցի ուսուցիչներն ստիպուած են լինելու ոգտագործել տարի աշխարհագրութիւնի դասագրքերը, ուստի, դասագրքի թեթութիւնները յրաքնելու համար ուսուցիչը պետք է տարրական դպրոցում դասավանդման պրոցեսում խոշոր ուշադրութիւն դարձնի քարտեզի ուսումնասիրութիւնը, նմանապես և աշխարհագրական պատմութիւնների ու նկարագրութիւնների ընտրութիւնը, վորոնք պետք է ոգտագործուելն ինչպես դասարանում, նույնպես և աշակերտների արտադպրոցական ընթերցանութիւնի միջոցով :

Ուսուցիչը պետք է ոգտագործի այն աշխարհագրական քարտեզները, դիտողութիւնները և դրքերը, վորոնք նշուած են ՈՍՅՆ-ի Լուսժողովարտի 1934 թ. մայիսի 28-ի № 396 հրամանում :

## ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

1934-35 ՈՒՍ. ՏԱՐՎԱ. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

### 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՆԹԱՅՆ

Կուսակցութիւնի և կառավարութիւնի մայիսի 16-ին կայացրած վորոչումների մեջ տրուած են դիտելութիւններ, վորոնք հիմք պիտի ծառայեն 5-րդ դասարանի աշխարհագրութիւնի ծրագրի հետագար բարելաւմանը : Պահելով Փիզիկական աշխարհագրութիւնի ծրագրի վորոչմամբ ծախարչի կողմից մարչր ցամաքների տեսութիւն, միաժամանակ պարտաւորուել է ընդհանուր քարտեզի և հար

1000  
3967



մատչելի լինում է աշակերտներին հասակին: Այսպիսով՝ Ֆիզիկական աշխարհագրությունը, իր հիմքում մնում է առաջնանը, միայն համաձայն մեթոդական պահանջներին՝ մի քիչ փոխված է առանձին թեմաների ուսումնասիրություն կարգը, կոնկրետացատանձին թեմաների ուսումնասիրություն կարգը, թեմաների կարգում յեղած ված է դասընթացի ուսման նյութը: Թեմաների կարգում յեղած այս փոփոխությունները հնարավորություն են տալիս հետագա ուսումնական տարվա ընթացքում — մինչև նոր դասադրքի լույս տեսնելը — ոգտվել Սինիցկու առաջիկա դասադրքից այն համարյալուններով միասին, վորոնք մասնաձևով են ծրագրի բաժիններով տեսություն ընթացքին:

### Կողմնավորում և նկարում (6 ժամ)\*)

(«Պլան և քարտեզ» • Սինիցկու դասադրքում • էջ 14 22) •  
5-րդ դասարանի աշակերտների համար Ֆիզիկական աշխարհագրությունն ալիելի մասնիկի և կոնկրետ դարձնելու համար առաջին բաժնում արված է կողմնորոշում և աչխաչափ նկարը: Կարճ նախաբանից հետո, ուր դատարար է տրվում աշխարհագրություն մասին, արված է համարոտ կրկնողությունը — ինչ է կողմնացույց, մասշտաբ, պլան, քարտեզ, վորոնք սովորել են տարրական դպրոցում: Այս կրկնությունը պիտի կապել նոր նյութերի հետ, վորպեսզի աշակերտների համար հետաքրքիր լինի:

Կողմնավորում թեման պիտի մշակել կողմնացույցի ողնությունը՝ առկայից առաջ դասարանում, ապա՝ բակում և վերջապես դաշտում: Աչխաչափ նկարը պիտի մշակել նախ բակում և ապա դաշտում: Ուրեմն, եքսկուրսիան դառնում է աշխատանքի սկզբը նախան անհրաժեշտ յեղակետը:

Թե ինչպես պիտի քաշել աչխաչափի նկարը, բացատրված է դասադրքի 20, 21 և 22-րդ էջերում:

Նկարը պիտի կազմել դաշտում. նկարելու այս գործնական աշխատանքից անհամեմատ շատ ալիելի բան կատանան աշակերտները, քան թե բացատրապես դրքի նյութը յուրացնելուց:

### 2. Յերկրագնդի մակերևույթի ձևը (12 ժամ):

(«Յերկրագնդի մակերևույթի ձևը» էջ 47—56 • «Յերկրագնդի կեղևի կազմությունը» • էջ 28—29 • Սինիցկու դասադրքում):

Կողմնակի կերպով՝ այս առաջին եկսկուրսիայի միջոցին նյութեր են հավաքում շրջագատող վայրի մակերևույթի ձևի մասին:

\*) Յուցմունքները վերաբերում են 1933 թվին հրատարակված դասադրքին:

այն: Յերկրորդ եքսկուրսիայի գլխավոր նպատակն է՝ ուսումնասիրել մեր վայրերի մակերևույթի ձևերը:

Հարթությունը, վոր համարյա առեն տեղ պատահում է, կը կազմի առաջին թեման: Աշակերտներն եքսկուրսիայի ժամանակ տեսնում են հարթությունը, նկատի յեն առնում նրա բնորոշ գըծերը՝ դիտում են դետի յեղերը կամ ձորի ալիերը, վորից իմանում են հարթությունը կազմող հողի բնույթը և հողաշերտերի դասավորությունը: Յերկրով հարթությունից, վորն աշակերտներն անմիջականորեն ուսումնասիրում են, ուսուցչին անցնում է հարթավայրերի և լեռնադաշտերի ուսումնասիրության, սկզբում իՍՄՄ և ապա յերկրագնդի բոլոր մասերի: Այստեղ էլ աշակերտին ծանոթացնում են այն միջոցների հետ, վորոնցով հարթությունը պատկերացնում են պլանների և քարտեզների վրա:

Դասադրքում այս նյութը գտնվում է՝ էջ 46 և 47, նաև 29: («Փխրուն հողատարրերի (պորոզա) լճերի հատակին նստելը»): Հիմնական նյութը կազմում է տեղի հարթությունը: Բարտեղի վրա սովորելիք հարթավայրերը և լեռնադաշտերն ալիելի հետաքրքիր և կոնկրետ դարձնելու համար, անհրաժեշտ է «Ընտիր հատվածներից կտորներ կարդալ Սեծովյան տեսպների, Արեւմտյան Սիբիրի հարթությունների, Տիրեալ լեռնադաշտի և այլնի մասին:

Կարևորն այն է, վոր աշակերտը վոչ միայն իմանա, թե այս կամ այն հարթությունը վորտեղ է գտնվում, այլև կոնկրետ կերպով պատկերացնի իրան նրա առենարնորոշ գծերը: Նույնը պիտի սանել բլուրների, բարձրությունների և լեռների մասին: Բարձրություններն ուսումնասիրելիս պիտի անցնել նաև այն միջոցները, վորոնցով տեղագրական պլանների և քարտեզների վրա քաշում են դրանց սելյեֆները: Դասադրքը բավականաչափ նյութեր է տալիս (էջ 47—56):

Լեռների ծագման հարցը կյուսարանով «Յերկրագնդի կազմությունը» թեման ուսումնասիրելու ժամանակ:

### 3. Յամափ վրայի ջրերը — 8 ժամ:

(«Հիդրոսֆերա» գլխի մի մասը • էջ 59—74, Սինիցկու դասադրքը):

Առաջին յերկու թեմաների նման՝ «Ջրերը ցամաքի վրա» բաժինը պիտ մշակել կոնկրետ նյութերի վրա: Այս յերեք թեմաներն սրգանապես կապված են իրար հետ՝ եքսկուրսիոն մեթոդով մշակելու տեսակետից: Քիչ բացատրությամբ՝ դպրոցի շուրջը կարելի յե գտնել առու, գետ, լիճ կամ լճակ: Բնական

կամ արհեստական վորոնումների վրա կարելի չե գտնել ջու-  
րը թափանցող կամ չթափանցող շերտերի որինակներ: Տվյալ առ-  
վի կամ գետի որինակի վրա հոսող ջրերի գործունեությունը կա-  
րողության որակները ուսումնասիրությունը թեմային տալիս  
ե կոնկրետ բնույթ և անշուշտ կաջակցի աշակերտի մեջ հետա-  
քըքրություն առաջացնելու գործին, կենդանի բնությունը տիրե-  
լու համար: Ավելի հեշտ և հաստատուն կերպով աշակերտը կյու-  
րացնի այն յերևույթները, այն պրոցեսները, վորոնք թեև անմի-  
ջակամորեն չի կարելի դիտողություն յենթարկել, սակայն սերտ  
կապ ունեն կեզակուրսիայի առարկայի (որակի) հետ: Ինքն ըստ  
ինքան հասկանալի չե, վոր 5-րդ դասարանում դետակները, դե-  
տակներ կամ լճերի ուսումնասիրությունը կարելի չե բավականա-  
բար խորը և ավելի շատ մանրամասնություններով անցնել, քան  
թե 3-րդ դասարանում միևնույն թեման անցնելիս:

Թեման մշակելու կարգն իրատես չի վորոշում. ուսումնասի-  
րությունն սկսում են ստորերկրյա ջրերից, ապա անցնում են հո-  
սող ջրերին, լճերին, ովկիանոսներին, ծովերին: Միայն թեմայի  
վերջին բաժնում (ովկիանոսներ և ծովեր) անհրաժեշտ է անել  
հավելում մակընթացության և տեղատվության մասին, վորոնք  
լրացնում են ծովերի և ովկիանոսների կյանքի պատկերը (եջ  
37): Ուսուցչի համար լավ ուժանդակ նյութեր են տալիս համե-  
նեցիկը ընտիր հատվածներից հողմածներ, Նեչաևի «Գետերի և  
առուների գործունեությունը», «Ստորերկրյա ջրի գործունեյու-  
թյունը», «Ծովի գործունեյությունը» գրքերը: Ծուռովի «Ովկի-  
անոսները և ծովերը»: Ավելի լուրջ և դիտական, միաժամանակ և  
հետաքրքիր է Ծուլիցկինի գիրքը — «Ծովի ֆիզիկականի մասին  
սկզբունքներ»: Այս նյութերից ուսուցիչը կարող է գրույցներ,  
պատմություններ կազմել աշակերտներին համար:

#### 4. Յերկրի՝ ձևը և շարժումը (4 ժամ):

(Յերկիր — սլանետ. եջ 5-13. Սինիցկու դասագրքում):

Յերկրի ձևը և մեծությունը, յերկրի պտտվելն իր առանց-  
քի և արևի շուրջը — ըստ եյություն սրանք ֆիզիկական աշխար-  
հագրության ամբողջ դասընթացի ամենադժվար թեմաներն են:  
Ծրագրի համաձայն սրանց տեղ եր տված առաջին բաժնում («Յեր-  
կիր — սլանետ»): Յեղ հենց այդ դժվար թեմայից ել սկսվում  
ե արևադարձային դասընթացի ուսումնասիրությունը: Այ-  
ժամ դրանք առաջ են քաշված և անցնում են «Յամաքի վրայի ջր-  
բերը» (հիդրոսֆերա) բաժնից հետո:

Իբրև հիմք վերցվում է դասագրքի ամբողջ նյութը՝ 5 — 13,  
իբրև հիմք վերցվում է դասագրքի ամբողջ նյութը՝ 5 — 13,  
եջը մեջառած: Հատկապես պետք է կոնկրետացնել և պար-

զացնել «Յերկրադեղի տարեկան շարժումը». լրացումների հա-  
մար նյութեր կարելի չե վերցնել համենչիկովի «Աշխարհագրո-  
թյուն» գրքից (1923 թ.): Մեթոդի տեսակետից լավ մշակված  
նյութեր ունի — յերկրի շարժման մասին — Ուսկով Մ. Վ. իր  
«Մասնամատիկական աշխարհագրության տարրական դասընթա-  
ցը» գրքի մեջ:

Տիեզերքի տարածության մեջ յերկրի դիրքի մասին յեղած  
հարցը դրված է դասընթացի վերջում: (Տես՝ ներքև «Յերկիրը և  
աստղային համակարգությունը» թեման: Այս արված է այն նը-  
պատակով, վոր ավելի սերտ կապ ստեղծվի այս և հետագայի  
«Աստիճանացանց» թեմաների բովանդակության մեջ:

#### 5. Աստիճանացանց (4 ժամ)

(«Աստիճանացանց կարտիկ վրա» եջ 23-27. Սինիցկու դա-  
սագրքում):

«Աստիճանացանց» բաժինը նույնպես կարելի չե մշակել գըր-  
քի համաձայն. եջ 23-27. լրացումներ կարելի չե անել Մալաևի  
Սինիցկու և Տիամանի («Աշխարհագրություն» դասագրքից (ՖՁՍ  
ուսման հինգերորդ տարի, Ուսպեհաճաթ, Մոսկվա, 1932 թ., եջ  
18-27):

Տեղական ժամանակը և ժամային գոտիները կարելի չե վերց-  
նել Իլյինի «Ժամը քանիսն է» և համենչիկովի «Աշխարհագրու-  
թյուն» գրքերից:

#### 6. Յերկրագնդի կազմաբանությունը (10 ժամ):

(Լիտոսֆերա — եջ 27-36. Սինիցկու դասագրքում):

Այս թեմային, իբրև դժվարիներից մեկին, անցնում են յերկ-  
րի ձևի և շարժման ու աստիճանացանցին ծանոթանալուց հետո:  
Յերկրադեղի կազմվելու ընդհանուր պատկերը, ցամաքի և ջրերի  
բաժանվելը, յերկրադեղի սֆերաները (լիտո, հիդրո և աստոսֆե-  
րա), յերկրի կեղևի կազմությունը և յերկրի միջուկի, սաղմի  
մասին հասկացողությունը (եջ 27-31):

Ծրագրի մեջ նյութի տեղափոխություն է կատարված ման-  
կավարժական նկատառումներով: Յերկրի միջուկի մասին տեղե-  
կություններ տալուց հետո՝ բնականորեն սխտի անցնել վուլկա-  
նիք յերևույթներին և յերկրաշարժներին ու հետո միայն տեղե-  
կություն տալ լեռների կազմվելու և ցամաքի հարատև, մշտա-  
կան տատանման մասին (եջ 31-36):



փոխադարձաբար ազդում են միմյանց վրա և առաջացնում այն, ինչ վոր կոչվում է ավելի բաց տեղում լինով «լանդշաֆտ»:

Ճիշտ նույնպես էլ անհրաժեշտ է ցույց տալ աշակերտներին, վոր մարդու ազդեցությունը բնությունը փոփոխելու տեսակետով — վոր միայն տարածվում է բուսական գոտիներում, ինչպես դասադրվում է ասված (եջ 102), այլև՝ լանդշաֆտի բոլոր տարրերի վրա: Հատկապես անհրաժեշտ է ընդգծել բնության ռեսուրսներն ոգտադործելու և լանդշաֆտը փոփոխելու տարբերությունը ԽՍՀՄ և կապիտալիստական տնտեսության պայմաններում:

Կենդանական աշխարհի բաշխումն ըստ զոնաների դասադրելի մեջ էլայնան, մեծ թերություններով է պարզաբանված. կենդանիներին ընդհանրապես բնորոշելիս — որինակ՝ տաք զոնային — աշակերտները չեն ըմբռնում այն տարբերությունը, վոր կարողություններն ունենան Մ.Ֆրիկայի, Ասիայի կամ Ամերիկայի կենդանական աշխարհում: Աշակերտները գոնե տարրական հասկացություն չեն կազմում կենդանա — աշխարհագրական շրջանների մասին, իրենց հատուկ, բնորոշ կենդանիներով. չի պարզվում, վոր հյուսիսային և հարավային Ամերիկայում չկան որինակ առյուծներ, վագրեր, Փղեր, վոր ընծուղտերը, զերբերը հատուկ են Ա.Ֆրիկայի շրջանին, վոր նոր Աշխարհի կապիկները նույնը չեն, ինչ վոր Ասիայի և Ա.Ֆրիկայի կապիկները և այլն: Կենդանական աշխարհի շրջաններին ավելի ևս ճշգրիտ սահմանավորումը տրված է Կրոնթերի, Գրիգորելի, Բարկովի և Մաֆրանովի առաջին դասադրում (աշխարհագրության սկզբնական դասընթացը). Աշխարհագրության դասընթացը (Յեվրոպայից դուրս յերկրների) և Լեսգաֆթի ձեռնարկում — Ֆիլիկական աշխարհագրության համառոտ դասընթաց):

Այս ոժանդակ գրքերի բացակայության դեպքում ուսուցիչը կարող է վորոշ նյութեր ձարել Սինիցկու դասադրում (մայր ցամաքների տեսություն):

Դասընթացի լանդշաֆտային զոնաների բաժինը պետք է տալ տունդրաների, տայգաների, ստեպաների, անապատների, տրոպիկական շրջանների, սավանաների, տրոպիկական անտառների պատկերափոր նկարադրություններ, իսկ այդ նկարադրությունները, ըստ հնարավորության, կատարել նկարներով, պատկերներով:

Այս թեմայում նոր են մարդու, յերկրագնդի բնակչության թվի, ազգաբնակչության դասավորման և ցեղերի մասին յեղած տեղեկությունները:

Մարդկային ցեղերի ուսման ժամանակ պետք է ցույց տալ, վոր Ֆիլիկական հատկանիշները նկատի ունենալով՝ բուրժուա-

կան դանդաղան գիտնականները մարդկությունը բաժանում են զանազան թվով ցեղերի — յերեքից մինչև 60 և կանգ են առնում յերեք բաժանման — սպիտակ, դեղին և սև յեղերի — վրահերքել հակադրական այն տեսությունը, վորով իբր թե բնականից վորոշ ցեղեր նախորոշված են տիրապետելու, վորոշ ցեղեր՝ հպատակվելու: Անհիմն է նաև խոսել բարձր և ցածր ցեղերի մասին:

Այս ուսմունքն ստեղծել են բուրժուական գիտնականները, նպատակ ունենալով դիտավորապես արդարացիել դադութային քաղաքականությունը և այն անողոք շահագործումը, վորին յեն թարկվում են «գունավոր» աղղերը:

### 10. Յերկիրը և արևային համակարգությունը

(4 ժամ) («Յերկրի դիրքը տիեզերքի տարածության մեջ». եջ 11-13 դասադրում):

5-րդ դասարանի դասընթացի վերջին թեման կազմում է յերկրի և արևային համակարգության մասին յեղած գլուխը: Այս բաժինը դադափար է տալիս ուրիշ պլանետների շարքում յերկրի բնած տեղի, արևային համակարգության, աստղերի մասին և այն տեսությունների, վորոնցով բացատրում են յերկրի ծագումը: Այս բոլորի մասին Սինիցկու դասադրումը շատ կարճ է խոսվում (տես՝ «Տիեզերքի տարածության մեջ յերկրի դիրքը» եջ 11-13), չնայած, վոր այս հարցերը կենդանի հետաքրքրություն են դարձնում աշակերտների մեջ: Այլևի մանրաքրքրություն են դարձնում աշակերտների մեջ: Այլևի մանրա մասն նյութեր — զրույցի համար — ուսուցիչը կդանի Կրոնթի — «Աշխարհագրություն», Կամենչիկովի — «Աշխարհագրություն», Պակրովսկու «Տիեզերագիտություն և ուրիշ գրքույկներում. հատկապես Ջինսի «Աշխարհների շարքում» գրքույկում (հրատ. Պետ. տեխ. թեոր. Մ. 1932 թ.), վորտեղ պարզ ու բանաստեղծական դեղարվեստական ձևով լուսաբանվում են բոլոր նոր նվաճումները, վոր մարդկությունը կատարել է տիեզերքի կազմության բնագավառում:

Թեմաների համար ժամեր նշանակելիս նկատի յե առնված յուրաքանչյուր թեմայի կրկնությունը, բացի այդ՝ ամբողջ կուրսը կրկնելու համար հատկացված է չորս ժամ:

### 6-րդ դասարանի ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՆԹԱՅԸ

Համկոմկուսի (բ) Կենտկոմի և Ժողկոմխորհի 1934 թ. մայիսի 16-ի վորոշումների մեջ — ԽՍՀՄ տարրական և միջնակարգ

դպրոցների աշխարհագրութեան դասավանդման մասին, առաջարկված է — «6-րդ դասարանի ծրագրում կենտրոնանալ յերկրամասերի ֆիզիկոս — աշխարհագրական տեսութեան վրա (Յեվրոպա, Ասիա, Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա), ավելացնելով հիմնական տեղեկութեւններ յուրաքանչյուր յերկրամասում դասված կարևոր պետութեւնների մասին (պետական կազմը, ժողովրդական տնտեսութեւնը և այլն) : Կրճատել և պարզացնել ուսման նյութը, հարմարեցնելով այդ դասարանի աշակերտներին հասակին» :

Այս վորոշման համաձայն՝ արդեն առաջիկա 1934-35 ուս. տարում աշխարհագրութեան դասավանդումը պիտի կատարվի կուրսի այն ծավալով, վոր սահմանված է 6-րդ դասարանի համար կենսական և ժողովրդական փոքր ուսումների մեջ : Այս դասը խցն ուսումնասիրելու համար ՌԽՍՖՇ Լուստողիովը հատկացրել է 80 ժամ : Մինչև նոր ծրագրերի և դասագրքերի հրատարակվելը, 6-րդ դասարանի դասավանդութեւնը պիտի կատարվի դասագրքերի և ծրագրերի այն յերկու հրատարակութեւնների համաձայն, վորոնք յույս են տեսել 1933 և 1934 թ.թ. 5-րդ և 6-րդ դասարաններին համար :

5-րդ դասարանի ծրագրից պիտի ուղտադործել 7-րդից մինչև 12-րդ (ներառյալ) բաժինները . (Եջ 13-19), 6-րդ դասարանի ծրագրում (Եջ 19-31) ուղղումներ և կատարում, բայց ընդհանուր առմամբ, ուղտադործվում է ամբողջութեամբ այս ծրագրն երով աշխատելիս ուղտադործելու յին նաև համապատասխան դասագրքերը :

1. Լ. Գ. Սինիցկի — «Ֆիզիքական աշխարհագրութեւն» (5-րդ տարվա դասընթաց. 1933-34 թ. հրատարակութեւն) . 7-րդից մինչև 12-րդ բաժինները . Եջ 104-144 :

2. Ս. Վարժանսկի և Լ. Սինիցկի — «Կապիտալիստական յերկրների աշխարհագրութեւնը» (6-րդ տարվա դասընթաց. 1933-1934 թ. հրատ.) :

Դասավանդութեան դասընթացում ամենակարևոր ուշադրութեւնը պիտի դարձնի աշակերտներին սխտեմի վերածված, հաստատուն դիտելիքներ տալու վրա՝ ֆիզիկոս — աշխարհագրական նյութից, համաձայն յերկրամասերի և յերկրներին, այն ել դասագրքի մեջ տրված ծավալով և վոր պակաս : Նույնպես և անպայման կերպով անհրաժեշտ է, վոր աշակերտները հաստատուն տնտեսութեւն ձեռք բերեն, իմանան աղան կերպով — կուրսի սահմաններում — առաջնորդվել բարտեղներով . դասագրքերում յեղած նվազագույնը պիտի ամրապնդվի աշակերտների հիշողութեւն մեջ ամենալրիվ կերպով :

Այս խնդրի յրազործումը շատ մեծ չափով հեշտանում է նրանով, վոր այս ուսումնական տարում աշխարհամասերի ֆիզիկոս — աշխարհագրական տեսութեւնը 6-րդ դասարանում կրկնվում է, և յերկրագիտութեան նյութի քանակը կրճատվում է, բովանդակութեւնը պարզացվում : Մյուս կողմից՝ ավելի շատ ժամանակ է տրվում այս հեշտացրած տեքստի ուսմանը և յերկրամասերի կրկնութեան համար, քան թե անցյալ տարի յեր տրված յերկրամասերի ուսման և յերկրագիտական բոլոր նյութերի մըշակման :

1934-35 ուս. տարվա համար 6-րդ դասարանի առարկայի դասավանդման և ծրագրերը ուղղելու հետեյալ կարգն է վորոյ վում .

1. 1934 — 35 ուս. տարվա 6-րդ դասարանի ծրագրերն ըսկրեսլ նախընթաց (5-րդի) ուսումնական տարվա ծրագրի և դասագրքի կրկնութեամբ : Առաջին թեման վերցնել Յեվրոպայի ֆիզիկոս-աշխարհագրական տեսութեւնը (ծրագրի 7-րդ բաժինը, Եջ 13-14) . 7-րդ բաժինը (Եջ 104 - 44) Սինիցկու «Ֆիզիքական Աշխարհագրութեւն» դասագրքից (կրկնութեան համար տրվում է 8 ժամ) յուսումներ անել ծրագրից (Եջ 19 - 29) և Ս. Վարժանսկու ու Լ. Սինիցկու «Կապիտալիստական Յերկրների Աշխարհագրութեւն» դասագրքից :

**ՅՈՒԵՐՈՐԴ ԾԱՔԱԹ.** — Գումարում և հանում 7-ով (1 ժամ): Մետր և նրանով չափելու վարժություններ (1 ժամ): Գումարում և հանում 8-ով և 9-ով (մեկ ժամ): 7-ով, 8-ով և 9-ով գումարելու և հանելու աղյուսակի ամրապնդման վարժություններ: Մետրով չափելու աշխատանքի շարունակությունը (մեկ ժամ): Գումարի և գումարելիի ոգնությամբ յերկրորդ գումարելին հանման գործողության միջոցով գտնելու խնդիրների լուծումը (1 ժամ): 7-ով, 8-ով և 9-ով գումարելու և հանելու աղյուսակի ամրապնդման աշխատանքի շարունակությունը (մեկ ժամ):

**ՈՒԹԵՐՈՐԴ ԾԱՔԱԹ.** — Գումարման և հանման որինակների և խնդիրների լուծումը 10-ի սահմաններում (1 ժամ): Խնդիրների կազմման աշակերտների կողմից ուսուցչի տված ձևի համաձայն (1 ժամ): Անցած աղյուսակի ամրապնդման և կրկնողության վարժություններ (1 ժամ): Վերոհիշյալ տիպի խնդիրների լուծումը (1 ժամ): Յերկու գործողությամբ թվական որինակներ

բի լուծումը (1 ժամ) : Խնդիրներ կազմելու և կազմածը լուծելու աշխատանքի շարունակութունը (1 ժամ) :

ԻՆՆԵՐՈՐԴ ԾԱՔԱԹ. — Առաջին տասնյակի թվերի կազմութունը (2 ժամ) : Թվի վերլուծման և յերկու գործողությամբ խնդիրների լուծումը (հասարակ դեպքերը) (2 ժամ) : Վարժ բան վոր հաշիվ (1 ժամ) : Ինքնուրույն խնդիրների կազմումը աշակերտների կողմից (1 ժամ) :

Տասնորդ շարք. — Քառորդի ընթացքում կատարած աշխատանքի հաշվառումը :

### ՅԵՐԿՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ

#### 1-ԻՆ ՔԱՌՈՐԴ

1-ԻՆ ԾԱՔԱԹ. — Յերկանիչ թվերի գումարը (առանց սասնյակն անցնելը) 46+32 (2 ժամ) :

Յերկանիչ թվերի հանման դեպքերը (յերբ նվազելի միավորները նվազարարի միավորներից ավելի չեն) որինակ՝ 58—43 (2 ժամ) :

Պոպոլի դասագիրքի էջ 59, № № 3, 4, 7 որինակների լուծումը — (2 ժամ) :

2-ԻՆ ԾԱՔԱԹ. — Խնդիրների լուծում — (2 ժամ) :

Յերկանիչ թվերի գումարման դեպքերը (յերբ գումարելիների միավորների գումարը հասարակ է 10-ի) 25+5 — (1 ժամ) :

Միանիչ թվի հանումը կյոր տասնյակներից 40—8 (1 ժամ) :

Խնդիրների լուծում — (2 ժամ) :

3-ԻՆ ԾԱՔԱԹ. — Ծանոթութուն խորանարդի հետ (1 ժ.) :

Ծանոթութունը չորսուակի հետ (1 ժամ) :

Գումարման և հանման անցած դեպքերի ամրապնդումը (առանց տասնյակն անցնելը) 100-ի սահմանում (62+24), (78—35) (2 ժամ) :

Որինակների լուծում № 11, 12 էջ 59 Պոպոլի դասագիրքի :

4-ԻՆ ԾԱՔԱԹ. — Ծանոթութուն գունդի հետ (1 ժամ) :

№ 1, 2, 3, 4 առաջագրության մշակումը էջ 60 Պոպոլի դասագիրքի (2 ժամ) :

Խնդիրների № 13, 14 և որինակների № 15, 16 լուծում էջ 60, Պոպոլի դասագիրքի (3 ժամ) :

5-ԻՆ ԾԱՔԱԹ. — Ուղիղ և կոր գծեր (2 ժամ) :

Թուկի և ջրեղերի ոգնությամբ կարողանալ գետնի վրա գծել ուղիղ գիծ (2 ժամ) :

Կարողանալ չափել գետնի վրա գծած ուղիղ գծերը (2 ժ.) :

6-ԻՆ ԾԱՔԱԹ. — № 1, 2, 5 խնդիրների լուծում էջ 61 Պոպոլի դասագիրքի (2 ժամ) :

10—20 մետրի սահմաններում աչքի միջոցով տարածութուններ վորոշելու վարժություններ (2 ժամ) :

№ 4, 5 խնդիրների լուծում էջ 61, Պոպոլի դասագիրք — (2 ժամ) :

7-ԻՆ ԾԱՔԱԹ. — Գումարման և հանման խնդիրների և որինակների լուծումը 100-ի սահմանում (առանց տասնյակն անցնելը) էջ 62—63 Պոպոլի դասագիրքի (6 ժամ) :

8-ԻՆ ԾԱՔԱԹ. — Խնդիրների լուծում մի քանի միավորների ավելացումով և ստորացումով (2 ժամ) :

Յերկանիչ թվի գումարումը յերկանիչ թվով կյոր տասնյակներ ստանալու համար (1 ժամ) :

Կյոր տասնյակներից յերկանիչ թվի հանումը (2 ժամ) :

Ուղիղ գծերի չափման վարժություններ, բակի լայնության և յերկարության չափումը (1 ժամ) :

9-ԻՆ ԾԱՔԱԹ. — Յերկանում անվանական թվերի գումարումը և հանումը առանց վերածման և անորոշարժման (3 ժամ) :

Յերկանում անվանական թվերի գումարումը և հանումը առանց վերածման և անորոշարժման (անցածը ամրապնդելու վարժությունների շարունակութունը) (3 ժամ) :

10-ԻՆ ԾԱՔԱԹ. — Առաջին քառորդում անցածի կրկնումը և աշխատանքի հաշվառումը (3 ժամ) :

3-ԻՆ ԳԱՍԱՐԱՆ

1-ԻՆ ՔԱՌՈՐԴ

1-ԻՆ ԾԱՔԱԹ. — Գումարում և հանում 1000-ի սահմանում (2 ժամ) :

Գումարում և հանում մի թվի կյորացումով (2 ժամ) :

Գումարում և հանում (2 ժամ) :

2-ԻՆ ԾԱՔԱԹ. — Չափերի կրկնումը, յերկանում անվանական թվերի գումարումը և հանումը (2 ժամ) :

Յերկանում յերկարության չափերի գումարումը և հանումը (1 ժամ) :

Խնդիրների լուծում թվերի կյորացումով (գումարում և հանում) (2 ժամ) :

Խնդիրների լուծում անվանական թվերով (1 ժամ) :

3-ԻՆ ԾԱՔԱԹ. — Կյոր հարյուրակների բազմապատկումը և բաժանումը 1000-ի սահմանում (կրկնողութուն և ամրապնդում) (2 ժամ) :

Կյոր տասնյակների բազմապատկումը միանիչ թվով 1000-ի սահմանում (1 ժամ) :

Գումարման, հանման և բազմապատկման գործողություններից բարեկացած որինակների լուծումը (3 ժամ) :

4-րդ ՇԱՔԱԹ — Յերկանիչ թվի բաղմապատկումը միանիչ թվով 1000-ի սահմանում (2 ժամ) :

Կլոր տասնյակներ ունեցող յեռանիչ թվի բաղմապատկումը միանիչ թվով 1000-ի սահմանում (2 ժամ) :

Յեռանիչ թվի բաղմապատկումը միանիչ թվով (հասարակ գեպքերը) (2 ժամ) :

5-րդ ՇԱՔԱԹ — Հարյուրավորներից և միավորներից բաղկացած յեռանիչ թվի բաղմապատկումը միանիչով (1 ժամ) :

2-3 հարյուրների գումարման, հանման և բաղմապատկման դոր ծողութայիններից բաղկացած խնդիրների լուծումը (3 ժամ) :

Դիագրամների գծադրումը վանդակավոր թղթի վրա (1 ժամ) :

6-րդ ՇԱՔԱԹ — Կլոր տասնյակների բաժանումը միանիչ թվով 1000-ի սահմանում (կրկնումը) (2 ժամ) :

Հարյուրակներից և տասնյակներից բաղկացած թվի բաժանումը միանիչ թվով (3 ժամ) :

Բաժանման մշակման գեպքերի խնդիրների լուծումը (1 ժամ) :

7-րդ ՇԱՔԱԹ — Նախորդ դասի շարունակութունը — (2 ժամ) :

Յեռանիչ թվի բաժանումը միանիչ թվով (հասարակ գեպքերը) — (2 ժամ) :

Խնդիրների և որինակների լուծումը — (2 ժամ) :

8-րդ ՇԱՔԱԹ — Անցած չափերի վերաբերյալ ձևեր բերած գիտելիքների ամփոփում և համակարգում — (1 ժամ) :

Մետրական չափերի վերածումը և անդրադարձումը — (3 ժամ) :

Գումարման և հանման որինակների և խնդիրների լուծումը վերածումով և անդրադարձումով — (2 ժամ) :

9-րդ ՇԱՔԱԹ — Ծանոթութուն կրկնաբարի հետ և նրա չափումը (տեղի վրա) — (2 ժամ) :

Տեղի վրա ուղիղ գծերի չափումը և նրանց փոխադրումը պլանի վրա ըստ մասշտաբի — (2 ժամ) :

Վանդակավոր թղթի վրա գծադրելի ուղղանկյուն կոնստրուկցիան — (2 ժամ) :

10-րդ ՇԱՔԱԹ — Առաջին քառորդում կատարած աշխատանքների հաշվառումը — (3 ժամ) :

4-րդ ԴԱՍԱՐԱՆ

1-ին ԲԱՌՈՐԴ

1-ին ՇԱՔԱԹ — Բանավոր հաշիվ գումարների կլորացումով — (1 ժամ) :

Յանկացած մեծութան թվերի լանավոր և գրավոր թվարկութունը (մտցնելով և միլիարդների դասը) — (2 ժամ) :

Խնդիրների լուծումը չորս գործողութամբ 1-000-000-ի սահմանում — (3 ժամ) :

2-րդ ՇԱՔԱԹ — Յանկացած մեծութան թվերի թվարկութուն շարունակութունը (կարգեր և դասեր) — (1 ժամ) :

Հանման բանավոր հաշիվ նվազելիի և նվազարարի կլորացումով — (1 ժամ) :

Յանկացած մեծութան կլոր թվերի գումարումը (1 ժամ) :

Յանկացած մեծութան կլոր թվերի հանումը — (1 ժամ) :

Յանկացած մեծութան կլոր թվերի գումարման և հանման խնդիրների և որինակների լուծումը — (2 ժամ) :

3-րդ ՇԱՔԱԹ — Խնդիրների և որինակների լուծումը չորս գործողութամբ (միլիոնի սահմանում) — (2 ժամ) :

Յանկացած մեծութան թվերի գումարումը (6123734+ + 546253) — (1 ժամ) :

Յանկացած մեծութան թվերի հանումը (9885432—563021) (1 ժամ) :

Գումարման և հանման խնդիրների և որինակների լուծումը անցած դասի ամբաստանման համար — (2 ժամ) :

4-րդ ՇԱՔԱԹ — Ուղղանկյուն, սուրանկյուն և բութանկյուն յեռանկյունիներ — (2 ժամ) :

Կլոր թվերի ստացումը բաղմանիչ թվով միավորներով գումարելու միջոցով — (2 ժամ) :

Կլոր բաղմանիչ թվերից բաղմանիչ թվերի հանումը — (2 ժամ) :

5-րդ ՇԱՔԱԹ — Հանման վարժութուններ վերջում մի կամ մի քանի գերո ունեցող թվերով — (3 ժամ) :

Մի քանի գումարելիներից բաղկացած որինակների և խնդիրների լուծումը — (2 ժամ) :

Յեռանկյունիների մասին անցած նյութերի կրկնումը և նրանց համեմատումը — (1 ժամ) :

6-րդ ՇԱՔԱԹ — Անհայտ գումարելիի գտնելը — (1 ժամ) :

Յանկացած մեծութան թվերի գումարման և հանման որինակների և խնդիրների լուծումը — (3 ժամ) :

Ստորանորդ և նրա մակերեսը — (2 ժամ) :

7-րդ ՇԱՔԱԹ — Անհայտ նվազելիի գտնումը — (1 ժամ) :

Անհայտ նվազարարի գտնումը — (1 ժամ) :

Անվանական թվերի գումարումը — (2 ժամ) :

Անվանական թվերի հանումը — (2 ժամ) :

8-րդ ՇԱՔԱԹ — Անվանական թվերի գումարման և հանման որինակների և խնդիրների լուծումը — (2 ժամ) :

- Պարալլելադրեր և նրա մակերեսը — (2 ժամ):  
 Պարալլելադրերի ձև ունեցող մարմինների մակերեսի չափումը — (2 ժամ):  
 9-րդ ՇԱՅԱԹ — Խնդիրների և որինակների լուծումը չորս գործողություններ ամբողջ թվերով — (2 ժամ):  
 Ժամանակը վերոշեղու խնդիրների լուծումը — (2 ժամ):  
 Յերկարություն չափերից կազմված խնդիրների լուծումը (գումարում և հանում) — (2 ժամ):  
 10-րդ ՇԱՅԱԹ — 1-ին քառորդի աշխատանքի հաշվառումը — (3 ժամ):

## ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

### 1934—35 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱԹԵ-ՄԱԹԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Միջնակարգ դպրոցներում մաթեմատիկայի ծրագրի հիմնական թերութունը, համաձայն ընտրողական հետազոտությունների արդյունքի, կայանում է նրանց ուսումնական նյութերով ծանրաբեռնված լինելու մեջ: Այդ թերութունը վերացնելու նպատակով, անհրաժեշտ է 1934—35 ուս. տարվա ուսումնական նյութի վերաբաշխումն կատարել ըստ դասարանների, ղեկավարվելով ներքո հիշյալ ցուցմունքներով:

#### 5ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

5-րդ դասարանի թվարանության ծրագրից 1934—35 ուս. տարում հանել յերեք վերջին թեմաները՝

- 1) Հարաբերություններ և համեմատություններ. կախվածություններ մեծությունների միջև.
- 2) Տոկոսներ.
- 3) Տառային արտահայտություններ:

Յերկրաչափությունից՝ 5-րդ դասարանի ծրագրից հանել հետևյալ հարցերը՝

- 1) § 3-ից (յերես 7) «Յեռանկյան մակերեսը հաշվելու բանաձևվերը»: «Ուղիղ յեռանիստ պրիզմայի ծավալի հաշվումը»:
- 2) § 4-ից (յերես 7) «Շրջանի մակերեսի հաշվումը. պլանի ծավալի հաշվումը»:

5-րդ դասարանի թվարանության և յերկրաչափության ծրագրերը, բացի վերոհիշյալներից, մնում են անփոփոխ:

5-րդ դասարանի դասընթացն ուսումնասիրելու ժամանակ պետք է աչքի առաջ ունենալ, վեր այդ, դասընթացի հիմնական նպատակը, սովորողներին վերոշ քանակով յերկրաչափական փաստեր կուտակելու և յերկրաչափության բնագավառում գննական պատկերացումների ու չափումների նկատմամբ վարժություններ կատարելու հիման վրա վերոշ ունակություններ ձևաբերելու մեջ և կայանում:

ժամանակի որինակելի բաշխումն, ըստ ուսումնական ֆա-  
նորդների 5-րդ դասարանի համար

(1934-35 ուս. տարի)

I ֆառորդ

ԹՎԱՐԱՆՈՒՔՅՈՒՆ

- 1. Ամբողջ թվերով դործողութունների կրկնութունը. դործողութունների հատկութունները 38 ժամ.
- 2. Թվերի բաժանելիութունը 16 ժամ.
- 3. Սովորական կոտորակներ՝ զաղափար կոտորակների մասին 12 ժամ.

66 ժամ.

2-րդ ֆառորդ

Սովորական կոտորակներ

- 1. Գումարում և հանում — 20 ժամ.
- 2. Թվի մաս գտնելը. Բազմապատկում — 20 ժամ.
- 3. Թվի գտնելը նրա տված մասով: Կոտորակային թվերի բաժանման կանոնը — 9 ժ.:

49 ժամ.

III ֆառորդ

(Վեցորդակում 3 ժամ)

- 1. Սովորական կոտորակներ՝ Բաժանում: Կոտորակային թրվերով միատեղ դործողութուններ — 18 ժամ
- 2. Տասնորդական կոտորակներ (բազմապատկման դործողութունը ներառյալ) — 15 ժամ

33 ժամ

IV ֆառորդ

- 1. Տասնորդական կոտորակներ (վերջ) — 18 ժամ.

Յերկրաչափություն

Թվաբանության դասընթացում յերկրաչափական բու-  
վանդակութուն ունեցող խնդիրների լուծումը)

24 ժամ.

Ընդամենը — 200 ժամ.

6-րդ ԴԱՍԱՐԱՆ

Բարձրագույն խնդիրներ և  
վարժութունների լուծումը սո-  
վորական և տասնորդական կո-  
տորակներով — 6 ժամ.

Հանրահաշվի 6-րդ դասարանի ծրագրից հանել վերջին յեր-  
կու թեմաները՝ 1) միանդամ հայտարարներ ունեցող հանրահա-  
շվական արտահայտութուններ և 2) թվային դործակիցներ ունե-  
ցող առաջին աստիճանի հավասարումների սխեմներ:

Աչքի առաջ ունենալով ընթացիկ ուսումնական տարում 5-  
րդ դասարանում թվաբանության ծրագրի վերջին բաժինների  
թույլ մշակումը՝ «հարաբերութուններ և համեմատութուններ»,  
«տոկոսներ», «տառային արտահայտութուններ» բաժինների կրկ  
նորդութունը մտցնել 1934-35 ուս. տարվա 6-րդ դասարանների  
ծրագրի մեջ, հատկացնելով դրա համար 25-50 ուսումնական  
ժամ, նայած սովորողների փաստապես պատրաստակա՞նությանը և

Յերկրաչափությունից 6-րդ դասարանի ծրագրից հանել հե-  
տևվյալ յերկու թեմաները՝  
1) քառանկյունիներ և 2) ուղղանկյուն պատկերների մակերես  
ները:

ԺԱՄԱՆԱԿԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՇԽՈՒՄԸ 6-րդ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ  
Հանրահաշիվ Յերկրաչափություն  
(ԹՎԱՐԱՆՈՒՔՅՈՒՆ)

- 1-ին ֆառորդ  
1-ին կրկնութուն՝  
ա) Հարաբերութուններ և համեմատութուններ. :8 ժամ:  
բ) Տոկոսներ  
Տոկոսային հաշվումներով բոլոր դործողութուններով խըն-  
դիրներ 10 ժամ:
- 2. Հարաբերական քվեր  
(Գործողութունների որենքները) 21 ժամ:
- 3. Տառային արտահայտութուններ  
Ամբողջ միանդամ և բազմանդամ արտահայտութուններ  
(մինչև բազմապատկումը) 16 ժամ:

Ընդամենը 55 ժամ:

Յեռանկյուն

(Վերջ) — 6 ժամ.  
Շրջանագիծ



II քառորդ

(Վեցորյակում 3 ժամ)

- 1. Ամբողջ միանգամ և բազմանգամ արտահայտություններ (24 ժամ)

III քառորդ

(Վեցորյակում 2 ժամ)

- 1. Գործողություններ բազմանգամ արտահայտությունների հետ (կրկնողություն) 6 ժամ.
- 2. Նույնություն և հավասարում 16 ժամ.

22 ժամ.

IV քառորդ

(Վեցորյակում 2 ժամ)

- 1. Առաջին աստիճանի մեկանհայտ վարժությունների և խնդիրների լուծումը—12 ժ.

22 ժամ.

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Հանրահաշվի 7-րդ դասարանի ծրագրից հանել այդ դասընթացի վերջին թեմա՝ «քառակուսի հավասարումներ»-ը: Դրա հետ միասին 7-րդ դասարանի ծրագրի մեջ մտցնել՝ «Առաջին աստիճանի հավասարումների սխտեմը» թեման, վորն ընթացիկ ուսումնական տարում մասսայական դպրոցում մնացել է թերամրչակ:

7-րդ դասարանի հանրահաշվի դասընթացի հաջող յուրացման համար անհրաժեշտ է՝

ա) նախ քան «Հանրահաշվական արտահայտությունները բազմապատկիչների վերածելը» թեման ուսումնասիրելը, թվարանությունից դասընթացից «Թվերի բաժանելիությունը», «Թվերի ընդհանուր ամենամեծ բաժանարար և ընդհանուր ամենափոքր բա-

Յերկրաչափություն

(Վեցորյակում 2 ժամ)

- 1. Ուղիղ գիծ (12 ժամ) Անկյուն.

- 2. Յեռանկյուն (սկիզբը) (4 ժամ).

16 ժամ.

(Վեցորյակում 3 ժամ)

- 1. Յեռանկյուն—26 ժամ
- 2. Զուգահեռ ուղիղներ—7 ժամ.

33 ժամ.

(Վեցորյակում 3 ժամ)

- 1. Զուգահեռ ուղիղներ—12 ժամ.
- 2. Դասընթացի կրկնողութ.—7 ժամ.

18 ժամ.

Ընդամենը — 180 ժամ.

ժանելին դանելը» և «Գործողություններ կոտորակային թվերի հետ» թեմաները կրկնել:

բ) «Գործողություններ բազմանգամ հայտարարներ ունեցող՝ հանրահաշվական կոտորակային արտահայտությունների հետ» բաժինն ուսումնասիրելու հետ կապված, կրկնել 6-րդ դասարանի դասընթացից «Գործողություններ միանգամ հայտարարներ ունեցող հանրահաշվական կոտորակների հետ» բաժինը:

գ) Նախքան «Համեմատական հատվածներ» բաժինն ուսումնասիրելը, կրկնել՝ 1) յերկրաչափական համեմատություն. 2) համեմատության հիմնական հատկությունը. 3) համեմատությունից լուծումը. 4) հավասար հարաբերությունների և անանցյալ համեմատությունից հատկությունը:

Յերկրաչափություն 7-րդ դասարանի ծրագրից հանել այդ դասընթացի վերջին թեմա՝ «Մետրական առնչությունը (ստոնոչենիյե) յեռանկյան և շրջանի մեջ» և դասընթացն ավարտել 6-րդ ու 7-րդ դասարաններում ամբողջ անցածի կրկնողությամբ, հասկացնելով դրա համար (խնդիրների լուծման հետ միասին) մինչև 20 ժամ:

«Պատկերների մակերեսները» թեման անցնելու ժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել Պլութագորասի թեորեմը, վորը շատ դպրոցներում մնացել է չուսումնասիրված կամ ուսումնասիրվել է համառոտված (պարզեցրած) ապացուցման ճանապարհով:

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԺԱՄԱԲԱՆԱԿԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՇԵՈՒՄԸ

Հանրահաշիվ

(2 ժամ)

- 1. Թվերի բաժանելիությունը: Թվերի ընդհանուր ամենամեծ բաժանարարը և ընդհանուր ամենափոքր բաժանելին դանելը: Գործողություններ կոտորակային թվերի հետ—6 ժ.

- 2. ա) Հանրահաշվական արտահայտությունների բազմապատկիչների վերածելը.

- բ) Հանրահաշվական կոտորակների կրճատումը—16 ժամ.

22 ժամ.

Յերկրաչափություն

(2 ժամ)

- 1. Շրջանագիծ և շրջանի Յերկրաչափական կետեր 22 ժամ.

II Բառարդ

1. Պործողություններ կատարակային հանրահաշվական արտահայտությունների հետ:

Սուաջին աստիճանի, տառային գործակիցներ ունեցող հարմարումներ — 20 ժամ.

III Բառարդ

(3 ժամ)

1. Տառային գերծակիցներ ունեցող 1-ին աստիճանի հավասարումներ (վարժութ.) —

16 ժամ.

2. Հավասարումների սխառմար — 22 ժամ.

3. Քառակուսի արժատ հանելու (ամբողջ թվից) 5 ժամ.

43 ժամ.

IV Բառարդ

(Վեցորյակում 2 ժամ)

1. Քառակուսի արժատ հանելու (վերջ) — 5 ժամ.

Հավասարումների նկատմամբ վարժություններ և խնդիրներ լուծումը — 7 ժամ.

12 ժամ.

Ընդամենը — 161 ժամ.

Տ-Ր-Գ ԴԱՍՍՐԱՆ

Հանրահաշվի Տ-րդ դասարանի ծրագրից հանել յերկանդամ և յեռանդամ հավասարումների լուծումը:

Յերկրաչափությունից Տ-րդ դասարանում ավարտել հարթաչափությունը, հանելով Տ-րդ դասարանի ծրագրից տարածաչափություն «Ուղիղների և հարթությունների փոխադարձ դիրքը տարածության մեջ» բաժինը:

Յեռանկյունաչափության ծրագիրը պարզել և տալ հետևյալ ծավալով՝

Աղեղների և անկյունների չափումը: Սուր անկյան յեռանկյունաչափական ֆունկցիաները ( 1 ) X, Cօ X, g X, Ctg X ): Նույն

1. Համեմատություններ (կրկնողություն և լրացումներ) .

Համեմատական հատվածներ 12 ժամ.

(2 ժամ)

1. Պատկերների նմանությունը 22 ժամ.

(Վեցորյակում 3 ժամ)

1. 6-րդ և 7-րդ դասարանների յերկրաչափության դասընթացի կրկնությունը (խնդիրների լուծումը) 18 ժամ.

անկյան և լրացուցիչ անկյունների յեռանկյանաչափական ֆունկցիաների միջև յեղած կախվածությունը: Ուղղանկյուն յեռանկյունիների լուծումը (ըստ Ռիրկինի դասագրքի §§ 1-22, բացի sc X, csc X, ֆունկցիաներին վերաբերող բոլոր խնդիրներից):

Սովորողների հարթաչափությունից ունեցած գիտելիքներն ամրացնելու համար, անհրաժեշտ և Տ-րդ դասարանի ամբողջ 1-ին քառորդը հատկացնել հարթաչափության կարևորագույն հարցերի կրկնողությունը և հետևյալ թեորեմների ազդեցումներ՝ հավասարաբունք յեռանկյան հատկություններին վերաբերող թեորեմը, յեռանկյունիների հավասարության հատկանիշներին վերաբերող թեորեմը, զուգահեռակողմի և ուղղանկյան անկյունագծերին վերաբերող թեորեմը. շեղանկյան հատկություններին և սեղանի միջին գծի հատկություններին վերաբերող թեորեմները: Լարին ուղղահայաց արամագծի հատկություններին վերաբերող թեորեմը:

Թեորեմ այն մասին, վոր մի ուղիղի վրա չընկած յերեք կետերով կարելի յե անցկացնել չըջանագիծ. անկյան կողմերը հատող զուգահեռ ուղիղների հատկություններին վերաբերող թեորեմը՝ ուղղանկյուն յեռանկյան տարրերի միջև յեղած մետրական անորն չություններին վերաբերող 1, 2, և 3 թեորեմները:

Հակադարձ թեորեմ այն մասին, վոր յեռանկյան մեջ հավասար անկյունների դիմաց ընկած են հավասար կողմեր. հակադարձ թեորեմ՝ «Յեթե անկյան կողմերը յերկու զուգահեռ ուղիղներով հատելու հետևանքով ստացված մի կողմի կամավոր յերկու հատվածների հարաբերությունը հավասար և մյուս կողմի...» և այլն:

Հարթաչափության մնացած մասը հարկավոր և կրկնել, ցույց չառով թեորեմները, բայց ուղեկցելով այն խնդիրների լուծումով:

- 1) Կից և հանդեպ ընկած անկյունների հատկությունները:
- 2) Յեռանկյունիների հավասարության հատկանիշները. յեռանկյան կողմերի և անկյունների մեջ յեղած կախվածությունը:
- 3) Յերկու ուղիղների զուգահեռ լինելու հատկանիշները: Չուգահեռների մոտ ստացված անկյունները: Յեռանկյան անկյունների գումարը:
- 4) Յեռանկյան արտաքին անկյան հատկությունը: Բաղմանկյան անկյունների գումարը:
- 5) Չուգահեռակողմ:
- 6) Ուղղանկյուն: Շեղանկյուն:
- 7) Յեռանկյան և սեղանի միջին գծի (կողմերի միջնակետերը ուղիղի) հատկությունները:

8) Քառակուսու, ուղղանկյան և զուգահեռակողմի մակերեսները:

9) Յեռանկյան և սեղանի մակերեսները:

10) Հիմնական յերկրաչափական տեղերը: Աղեղների և լարերի հատկությունները շրջանագծում:

11) Անկյունների չափումը շրջանում:

12) Համեմատական հատվածների մասին յեղած թեորեմները:

13) Յեռանկյան նմանությունը:

14) Մետրական առնչությունն ուղղանկյուն յեռանկյան մեջ:

15) Մետրական առնչությունը շրջանում:

8-րդ դասարանի սովորողների հետ հարթաչափության անցած դասընթացի նշված կրկնողությունն անցնելով, հարթաչափության սխեմատիկ դասընթացն ըստ ծրագրի պետք է սովորել այն հաջով, վորպեսզի 9-րդ դասարանում անցյալ տարածաչափության դասընթացը:

# ԺԱՄԱՔԱՆԱԿԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՇԽՈՒՄԸ

## 8-րդ դասարանիս

ՀԱՆՐԱՀԱՇԻՎ

ՅԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

ՅԵՌԱՆԿՅՈՒՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

I ԲԱՆՈՐԳ

(Վեցորյակում 2 ժամ)

(Վեցորյակում 2 ժամ)

1. Առաիճաններով և արժաներով նույնական շեփոթումներ . . . 22 ժ.

1. Հարթաչափության դասընթացի կրկնողությունը . . . . . 22 ժ.

II ԲԱՆՈՐԳ

1. Քառակուսի հավասարումներ լուծելու թեորեմներ 16 ժ. ներ . . . . . 16 ժ.

1. Ներգծյալ և արտադրյալ բազմանկյուններ . . . . . 16 ժ.

III ԲԱՆՈՐԳ

(Վեցորյակում 3 ժամ)

(Վեցորյակում 1 ժ.)

(Վեցորյակում 1 ժ.)

1. Տունկցիաները և նրանց գրաֆիկը . 12 ժ.

Շրջանագծի յերկարությունը, Շրջանի մակերեսը . . . . . 11 ժ.

Սուր անկյան յեռանկյունաչափական Ֆունկցիաների: Կախվածությունը նրանց միջև . . . . . 11 ժ.

2. Բի բառակուսի և իրացիանալ հավասարումներ . . . . . 12 ժ.

3. Յերկանդամ և յեռանդամ հավասարումներ . . . . . 9 ժ.

Ընդամենը 33 ժ.

IV ԲԱՆՈՐԳ

1. Յերկբորդ աստիճանի հավասարումների սխեմա . . . . . 18 ժ.

1. Խնդիրների լուծումը. մասնավորապես մակերեսային հարցերի լուծումը . . . . . 6 ժ.

Ուղղանկյուն յեռանկյան լուծումը . . . . . 6 ժ.

Ընդամենը 161 ժ.

## 9-րդ դասարան

9-րդ դասարանում ընթացիկ տարում մաթեմատիկայի ազանգման դրություն հաղվածքից ստացված արդյունքների հիման վրա, 9-րդ դասարանի ծրագրից հանվում են՝

ա) Հանրահաղից՝ 1) Անհավասարություններ 2) Հավասարման հետադրությունը 3) Անորոշ հավասարումներ.

բ) Յերկրաչափությունից՝ կլոր մարմիններ.

գ) Յեռանկյունաչափությունից՝ հակադարձ շրջանային ֆունկցիաները:

# ՃԱՄԱԲԱՆԱԿԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱԾԽՈՒՄԸ

## 9-րդ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

ՀԱՆՐԱՀԱՇԻՎ

(Վեցրորդական 2 ժամ)

### I Բաճորդ

1. Առաջատու թյուն
2. Աստիճանացույցի մասին յեղած գաղափարի ընդհանրացումը . . . 7 ժ.

Թյան մեջ՝ Բաժնի կրթ-  
22 ժ. կողովությունը . . . 11 ժ.

### II Բաճորդ

- 1 Աստիճանացուցային և լողարթի մական ֆունկցիաները ճանաչողական լողարթի մեքեր (գրական խարակերտի ստիպ-յոգ) . . . . . 16 ժ.

### III Բաճորդ

1. Լողարթի մացուց (վեջ) բարդ տոկոսներ.
2. Միացություն թեո-րիան (մինչև հավասարումները) . . . . . 16 ժ.

22 ժ.

### IV Բաճորդ

1. Միացություններ (վեջ) . Նյութային բնույթը—12 ժամ.  
Կրկնողովություն  
Ընդամենը—180 ժ.

ՅՆԵՐԿՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

(Վեցրորդական 2 ժամ)

### Տարածաշափուրջում

1. Ուղիղների և հարթությունների փոխադարձ դիրքը տարածու-թյան մասին յեղած հիմնական գաղափարների կրկնողությունը . . . 11 ժ.

2. Անկյունների դուրսի և տարբերության յի-սանկյունաչափական ֆունկցիաները . . . 22 ժ.

1. Բազմանիստ պրիզմայի մակերես-ը . . . . . 8 ժ.

1. Լրիվ և հատած բուրդի մակերեսը՝ Պրիզ-մայի և բուրդի (լրիվ) ծավալները . . . . . 11 ժ.

1. Հատած բուրդի ծավալը 6 ժ.  
Կրկնողություն

ՅՆՈՒՆԿՅՈՒՆԱԶՍՓ.

(Վեցրորդական 2 ժամ)

### Հոնիումեթիա

1. Յեռանկյունաչափա-կան ֆունկցիաների և նը-րանց իրարից կախվածու-թյան մասին յեղած հիմ-նական գաղափարների կրկնողությունը . . . 11 ժ.

2. Անկյունների դուրսի և տարբերության յի-սանկյունաչափական ֆունկցիաները . . . 22 ժ.

- 1 Կրկնակի և կես ան-կյան ֆունկցիաները՝ Գումարի և տարբերու-թյան կերպարանափոխու-մը՝ Ոժանդակ անկյան մուծման որինակներ՝ 18 ժ.

1. Հավասարումների լու-ծումը . . . . . 10 ժ.
2. Յեռանկյունների լուծումը . . . . . 12 ժ.

22 ժ.

1. Որինակներ և յերկրաչափական լուծանդակությունները ինդիք-ների լուծումը—  
12 ժամ.

## 10-րդ ԴԱՍԱՐԱՆ

10-րդ դասարանի ծրագրից հանել՝ «Վերլուծական յերկրչափության հիմունքները» և «անսահման փոքրերի անալիզի հիմունքները»:

10-րդ դասարանի ծրագիրն առաջադրվում է հետևյալ տեսքով՝

### Հանրահաշիվ .

Հավասարումների և անհավասարությունների լուծման թեորիան և պրակտիկան

### Հավասարումներ .

- 1) Տասարյին և թվային հավասարություններ, նույնություններ և հարադասություններ: Հավասարումների դասակարգումը՝ հանրահաշվական և արանդեցնդեցնող:

Հավասարումը միայն ֆունկցիոնալ կախվածություն:

Հավասարագործ հավասարումներ: Տվյալ հավասարումն իրեն հավասարագործ հավասարում դարձնելը, հավասարման հիմնա-կան հատկությունների հիման վրա:

Տվյալ հավասարումների անհավասարադուր հավասարում-ներ ստանալը, յերբ նրա յերկու մասն էլ բազմապատկվում են անհայտ պարունակող արտահայտությամբ վրա և յերբ նրա յերկու մասն էլ բարձրացնում են ամբողջ դրական աստիճան:

- 2) Կոորդինատների մեթոդը: Գծային ֆունկցիան և նրա գրաֆիկը (գծային ֆունկցիայի մասնավոր դեպքը, ուղիղ համեմատականություն):

3) Մեկանհայտ առաջին աստիճանի հավասարումների լուծումների հետադրույթումը ստասյին սոլյարներ ունեցող կոնկրետ խնդիրների հիման վրա:

Դրանք լուծում՝ զրոյական, անվերջ և անորոշ:  $AX + B = 0$  հավասարման տարբեր լուծումների յերկրաչափական բացատրու-թյունը:

### Անհավասարություններ

- 4) Առաջին աստիճանի անհավասարություններ: Անհավա-սարությունների հատկությունները: Մեկանհայտ առաջին աս-տիճանի մեկ անհավասարություն լուծումը:

### Հավասարումների սխեմներ

- 5) Հավասարումների սխեմները: Հավասարումների հավա-սարագործ արտեմները: Յերկու հավասարումների սխեմի լուծ-ման յերկրաչափական նշանակությունը (յերկանհայտ առաջին աստիճանի): Լուծումների տիպերը՝ մեկ զույգ վերջնական և մի-րոշակի լուծումներ՝ անվերջ լուծումներ՝ բազմաթիվ լուծումներ

(անորոշութեան սխառեմը), սխառեման լուծում չունի (անհամա տեղելի հավասարումներ):

Բոլոր այդ տիպի լուծումների յերակաշարական խմաստը:

Անորոշ հավասարումներ

6) Անորոշ հավասարումն ամբողջ թվերով լուծման հնարա վոր լինելու պայմանները: Չուլդ ամբողջ թվերով լուծումն գտնել լը հաջորդական բաժանման և ընտրութեան ճանապարհով: Ամբողջ թվերով լուծման ընդհանուր Փորձաքանները: Ամբողջ և դրա կան լուծումների գտնելը:

7) Կեղծ և կոմպլեքս թվեր և գործողութուններ նրանց հետ: Բառակուսի հավասարումներ

8) Բանակուսի Փունկցիան և նրա գրաֆիկը: Մեկանհայտ քառակուսի հավասարման լուծման հետադոտումը: Դիսկրիմինանդ: Հետևյալ տեսքի քառակուսի հավասարման մասնավոր դեպքերի հետադոտումը՝ 1)  $C=C$ , 2)  $B=C$ , 3)  $B=C$ ,  $C=0$ , 4)  $A=0$

Իրական, կեղծ և հաստատար սրմատների յերկրաչափական նշանակութունը:

Յերկրորդ աստիճանի յեռանդամի հատկութունը և նրա դժային բաղադատակերչների վերլուծելը:

Իրացիոնալ հավասարումներ, բարձր աստիճանի հավասարումներ

9) Իրացիոնալ հավասարումներ: Կողմնակի սրմատներ: Յերկանդամ և յեռանդամ հաստատարումներ:

10) Յերկրորդ աստիճանի հանրահաչվական հավասարման ընդհանուր տեսքը: Կոչի (Հաուս-ի) թեորեմը կամավոր աստիճանի հանրահաչվական հավասարման սրմատների գոյութեան մասին:

Ամբողջ հանրահաչվական բաղադանդամի  $X^m - a^m$  տիպի յերկանդամի վրա բաժանելութեան վերաբերող թեորեմը: Հեգուեի թեորեմը և նրա կիրառումը  $X^m + a^m$  դեպի յերկանդամի  $X+A$ , յերկանդամի վրա բաժանելութեան նկատմամբ:

Բարձրաստիճանի հավասարումների լուծումը, նրանց ճախմասը բաղադանդատակերչների վերլուծելու ճանապարհով:

Յուցիչային և լոգարիթմական հավասարումներ:

11) Յուցիչային և լոգարիթմական Փունկցիաներ՝ նրանց հատկութունները և գրաֆիկները:

Յուցանիչային հավասարումների լուծման լոգարիթմացման յեղանակները, հիմքերի հավասարեցման յեղանակը. անհայտները փոխարինելու յեղանակը:

Լոգարիթմային հավասարումներ լուծելը:

### Յերկրչափություն

#### 1. Սահմանների տեսությունը

Անսոփոխ և փոփոխական մեծություններ: Անսահման փոքր և անսահման մեծ մեծություններ: Վերջ ունեցող փոփոխական մեծություններ: Անսահման փոքր թվերի որինակներ (չրջանին ներդժամ կանոնավոր բաղմանկյան կողմի յերկաքությունը, յերբ նրա կողմերի թիվն անսահմանորեն մեծաչնում է, անսահմանորեն նվազող յերկրաչափական առաջատվութեան ըրդ անդամի մեծությունը): Անսահման փոքրերի հետ գործողութուններ կատարելուն վերաբերող հիմնական թեորեմներ: Գաղափար սահմանի մասին: Կանոնավոր բաղմանկյան անկյան և ապոթեմայի մեծութեան սահմանը, յերբ նրա կողմերի թիվն անսահմանորեն մեծանում է: Անսահմանորեն նվազող յերկրաչափական առաջատվութեան անդամների գումարի բանաճելը (Փորձուլա): Խառը պարբերական կոտորակներ: Սահմանների մասին յեղած հիմնական թեորեմները (ապացուցը սահմանափակել անսահման-փոքրերի վերջնական թվի գումարի սահմանի մասին յեղած թեորեմայով):

#### 2. Սահմանների տեսության կիրառումը յերկրաչափության մեջ:

Շրջանագծի յերկարութեան և շրջանի մակերեսի բանաճելիքի դուրս բերելը: Բուրդի ճախալի, դլանի մակերեսի և ճախալի, կոնի և դնդի ու նրա մասերի մակերեսի և ճախալի բանաճելիքի դուրս բերելը սահմանների տեսութեան հիման վրա: Խնդիրների լուծումը:

#### Կառուցման խնդիրների լուծումը

- ա) Յերկրաչափական տեղերի մեթոդը.
- բ) Նմանութեան մեթոդը.
- գ) Հանրահաչվական արտահայտությունների, մասնավորապես քառակուսի հավասարման սրմատների կառուցման հանրահաչվական մեթոդը:

Յուցմունք՝ նշված մեթոդներով սովորողների հետ կառուցման խնդիրներ լուծելու համար ուսուցիչը նման խնդիրներ կրգանի յերկրաչափութեան մեթոդիկայի մեջ, վորը հրատարակվում է:

Կարելի յե ոգտագործել միջնակարգ դպրոցների համար հրատարակված՝ Берг-ի „Приемы решения геометрических задач на построение“. Изд. ГИЗ, Москва 1932 г.

**ՅԵՌԱՆԿՅՈՒՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ**

1. Հակադարձ շրջանային Ֆունկցիաներ .
  2. Յեռանկյունաչափական հավասարումները լուծումը .
  3. Այսպիսի խնդիրների լուծում, վորտեղ յեռանկյունաչափությունը կիրառվում է յերկրաչափության մեջ :
- Յուցմունք՝ համապատասխան բաժիններ կան ստարիլ դասս դրքում և խնդրադրքում . լուծելու համար նախատեսված յեռանկյունաչափական հավասարումները թիվն ուսուցիչը կարող է լը բացնել :

**ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Թվերի բնական շարքը : Հաջարկման տասնորդական սիւտակում : Գաղափար հաջարկման ուրիշ սիստեմների մասին :
2. Ամբողջ թվերի հետ թվաբանական գործողությունները կատարելու հիմնական որենքները և նրանց կիրառումը դործողությունների գրախոր և բանավոր կատարելու նկատմամբ :
3. Թվերի բաժանելիությունը : Ընդհանուր ամենամեծ բաժանարարը և ընդհանուր ամենափոքր բաժանելին (краткое)
4. Թվի դադափարի լայնացումը (կոտորակային, բացասական, իրոացիոնալ և կոմպլեքսային), բոլոր հնարավոր դեպքերի վրա տարածելով հակառակ գործողություններ կատարելը :

Իրոացիոնալ թիվը, վորպես նրա մոտավոր նշանակությունների սահման, վորը հաշված և միևնույն, բայց կամավոր աստիճանի ճշտությամբ :

Գործողությունների որենքների կայունությունը թվի դադափարի լայնացման ժամանակ :

5. Թվի և կետի միջև միանելի համապատասխանելիությունը թվային աստիճանի վրա : Կոմպլեքսային թվի յերկրաչափական պատկերացումը :

Յուցմունք՝ վերև պարզված են թվաբանության կրկնողության դասընթացի խնդիրները : Համապատասխան դասադրքեր չկան : Բայց 10-րդ դասարանի ուսուցիչն ստաջադրված բոլոր հարցերը կզտնի ինչպես թվաբանության դասադրքերում (համաչափելի թիվ), նույնպես և հանրահաշվի դասադրքում (հարարե բական, իրոացիոնալ և կոմպլեքսային թվեր) :

**ԺԱՄԱԲԱՆԱԿԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱԵՐՈՒՄԸ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ 1934-35 ՈՒՍ. Տ.**

**ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

- I Կատարի**
- ՀԱՆՐԱՍՆԱԿԻ**  
յիվ պրակտիկան
- 1) Լին աստիճան, հագադրումներ
  - 2) Անհավասարություններ
  - 3) Հավասարումների սխառնը 22 ժ.

- 1) սամանները տեսությունը
- Սահմանների տեսության կիրառումը 22 ժ.

**ՅԵՌԱՆԿՅՈՒՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ**

- 1) Յեռանկյունաչափական հավասարումներ 11 ժ.

**II Կատարի**

- 1) Անորոշ հավասարումներ
- 2) Գառակուսի հավասարումները 16 ժամ

- 2) Յեռանկյունաչափական կիրառությունները 8 ժ.

**III Կատարի**

- 1) Իրոացիոնալ հագադրումներ, բազդառական արժեքներ . . . 22 ժամ
- 2) Գործողությունների որենքները
- 3) Թվերի բաժանելիությունը
- 4) Ընդհանուր ամենամեծ բաժանարար և ընդհանուր ամենափոքր բաժանելին 11 ժամ

Յեռանկյունաչափական կիրառությունները 11 ժամ

**IV Կատարի**

- 1) Թվի դադափարի լայնացումը
- 2) Թվի պատկերացումը 6 ժամ

- 1) Կատարման խնդիրները լուծումը . . . 11 ժամ

## ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

1934—35 ՈՒՍ. ՏԱՐՎԱ. ՏԱՐԲԱԿԱՆ ԳՊՐՈՅ-  
ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

### 1-ին ԴԱՍԱՐԱՆ

1. «Ուսուցման առաջին տարվա հիմնական խնդիրները» — ներածութունը ծրագրից հանել:

2. 1-ին թեման «Առաջին աշխատանքները թղթի վրա» միացնել յերկրորդ «թղթից ինչ են պատրաստում» թեմայի հետ:

«Առաջին աշխատանքները թղթի վրա» թեմայից դուրս հանել «գիտելիքների ծավալը» բաժնի առաջին պարբերութան վերջին մասը — «թղթի այդ հատկությունների համեմատաբարունաբիշ նյութերի հետ (գործվածքի, փայտի, մետաղի հետ)»:

2-րդ «թղթից ինչ են պատրաստում» թեմայից դուրս հանել լաբորատոր աշխատանքները:

3-րդ «Կավը և նրա գործածությունը» թեման ծրագրից հանել:

4. 4-րդ «Առաջին աշխատանքները փայտի վրա» թեման միացնել 7-րդ թեմայի հետ դուրս հանելով «գիտելիքների ծավալը» և «աշխատանքի ձևեր» բաժինները:

5. 5-րդ «Անտառանյութը և նրա կիրառումը» թեման ծրագրից դուրս հանել:

6. 6-րդ «Աշխատանք մանրաթելավոր նյութերով, գործվածքներով և հագուստի խնամքը» թեման վերնագրերը «կար և հյուսվածք», դուրս հանել այդ թեմայից «գիտելիքների ծավալը» բաժինը, միաժամանակ «աշխատանքի ձևեր» բաժնում «քաշ կիսակ» բաժնից հետո ավելացնել «գոտու հյուսելը»:

7. 7-րդ «Ինչով են մարդիկ նամրորում» թեման վերնագրերը «տեխնիկական խաղալիք»: Տեղափոխել 4-րդ «առաջին աշխատանքները փայտի վրա» թեմայից «ունակությունների շրջան» բաժինը, լրացնելով թեման յերեխաների աշխատանքի հետևյալ որակներով — խաղալիքներով, թղթե ոձ, հող, ազդիկ (ժուժարկա), ճանճ, ջրադառ, թողանոթ, գնդադիր:

8. 8-րդ «Դաշտային բանջարանոցային և ծաղկանոցային

կուլտուրաների անեցման աշխատանքները» թեման հանել և տեղափոխել բնագիտութան դասընթացը:

9. «Աշխատանքի կազմակերպումը» թեման հանել ծրագրից:

### 2-րդ ԴԱՍԱՐԱՆ

1. «Ուսման 2-րդ տարվա հիմնական խնդիրները» — ներածութունը, առաջին «կերի նախապատրաստումը ու ճագարների և տնային մանր անասուններին կեր տալը» և յերկրորդ «ինչպես են պատրաստում թուղթը և կարտոնը, աշխատանք թղթի մասնաշաղկ» թեմաները դուրս հանել ծրագրից:

2. 3-րդ «Կարտոնի առաջին աշխատանքները» թեմայից «գիտելիքների ծավալը» բաժնից դուրս հանել «կարտոնի համեմատաբարունա Ֆաներիայի և թերթալոր մետաղի հետ, ըստ նրանց հատկությունների» և «ինչպես է կարտոնը պատրաստվում կարտոնածի արտադրութան մեջ»:

3. 4-րդ «Փաներային աշխատանք» և 5-րդ «Ճանրուքյուն առաջագործի արհեստանոցի հետ» թեմաները (բացի «գիտելիքների ծավալը» բաժնից, վորը փոխադրվում է 7-րդ թեման) դուրս հանել ծրագրից:

4. 6-րդ «Ինչպես է պատրաստվում հագուստը» թեման վերնագրերը «կար»: Սույն թեմայի «գիտելիքների ծավալը» բաժնից դուրս հանել «ստառ» և «սատր» գործվածքները, նմանապես «գաղափար կարի արհեստանոցի աշխատանքի կազմակերպման մասին և ծանոթութունը կարի մեքենայի հետ և նրա աշխատանքի արագութան համեմատաբարունա ձևերի աշխատանքի հետ»: մասը:

«Ունակությունների շրջան» բաժնից դուրս հանել «գործվածքների ձևերը պարզ աշխատանքների համար», «առաջին փորձնական աշխատանքը հարգաբարձ կարի մեքենայով», և «աշխատանք» — բաժնից «թղթի պարզ ձևվածքների (վիկրոյկա) պատրաստումը», ավելացնելով սույն բաժնի «աշխատանք հարգած կարի մեքենայով», «հասարակ կոճականցիկ կարով և խաչով նշանել պատրաստած իրերը»: Դուրս հանել 6-րդ թեմայից «լաբորատոր աշխատանք» և «եֆակուրսիա» բաժինները: Տալ յերեխաներին հետևյալ աշխատանքը՝ թաշկինակ, դրոշակ, սրբիչ, քսակ կրկնակողիները համար, եքսկուրսիոն պայուսակ:

5. 7-րդ «Տեխնիկական մոդելացում» (բարձրահան մեխանիկաները և փոխադրական միջոցները) թեման վերնագրերը «Տեխնիկական խաղալիք»: Տվյալ թեմայի մեջ մտցնել 5-րդ թեմայի «Ունակությունների շրջան» բաժնին առանց «անցքերի ծակելը չաղափով և փայտի ներկելը անիլինի ներկով» մասի:

6. 8-րդ «ինչպես է կառուցվում տունը» և «աշխատանքի և արտադրության կազմակերպումը» թեմաները ծրագրից դուրս հանել:

7. 9-րդ «Աշխատանքը՝ դպրոցական հողամասի սածիլանցում» ծրագրից դուրս հանել և փոխադրել բնագիտություն դասընթացը:

### 3-րդ ԴԱՍԱՐԱՆ

1. «Ուսուցման 3-րդ տարվա հիմնական խնդիրները» — ներածությունը ծրագրից հանել:

2. 1-ին «Բանջարանցային և դաշտային կուլտուրաների բերքահավաքը» ծրագրից հանել և փոխադրել բնագիտության դասընթացը:

3. 2-րդ «Փայտի հիմնական տեսակները» և 3-րդ «Ծանոթություն անտառանյութերի մթերման և պահպանությանը» թեմաները ծրագրից դուրս հանել:

4. 4-րդ և 5-րդ թեմաները միացնել և անվանել «ինչպես է պատրաստվում գիրքը» վերնագրով, միաժամանակ 4-րդ թեմայից դուրս հանել «ստագրություն դրուսի պատմությունը» թողնելով «Գուտենբերգի առաջին ստագրատիան մեքենան»:

5-րդ թեմայի «գլխարկների ծախսը» բաժնից դուրս հանել «թերթերի կարելը՝ ձեռքով, մեքենայով», «ճանոթություն կարտոնաժի» — կաղամբարարական աշխատանքի մեքենաների հետ», «կտրտոնակտրիչ (պլաստիկ), կտրիչ մեքենա», «մեքենայի հիմնական բանոց մասերը», «ձեռքի աշխատանքի և մեքենայի համեմատությունը» կետերը:

«Ունակուրքայունների շրջան» բաժնից դուրս հանել «գիրքը (սոց հաստ) կաղմելու նախապատրաստությունը» մինչև վերջը, «գրքի պարզ վերանորոգումը» (թերթերը սոսնձով կպցնելը, կարելը):

«Աշխատանքի ձևեր» բաժնից թողնել միայն «բրոշյուրների և գրքերի կաղմելն իր և դպրցի գրադարանի համար՝ աշխատանք ունեցողների բաժանելով», (սակ ա), բ) և գ) կետերը հանել:

5. 6-րդ «Թելն ու գործվածքն ինչպես են պատրաստում» թեման վերնագրել «կար և հյուսվածք» վերնագրով: Սույն թեմայից դուրս հանել «գլխարկների ծավալը», «ունակուրքայունների շրջան» և «լաբարատոր աշխատանք» բաժնիները, իսկ աշխատանքի ձևերը՝ բաժնում ավելացնել աշխատանքի հետևյալ որակները՝ «պիրենթական միկասպ, գոգնոց աշխատանքային սենյակի համար, Փիզկուրուրական տապոչկա»:

Հյուսվածք. — Յանց վոլեյ-բոլի համար, պայուսակներ, ձկնորսական իրեր, գորգեր, գունավոր գործվածքի կտորներից: Եփակուրսի՝ — կարի գործարան կամ արհեստանոց:

6. 7-րդ «մեքենաների հիմնական մասերը և նրանց աշխատանքը» թեմայի «գլխարկների ծավալ» բաժնից ծրագրից դուրս հանել, «ունակուրքայունների շրջան» բաժնին ավելացնել «քանոնի և անկյունարդի ողնությամբ նշանակելու ունակություններ», թղթերի կտրում միկաստով, կտր բզով (հերյունի) թղթի վրա անցքերի բացումը, շրջանների կտրումը շրջապոչի ողնությամբ»:

Իսկ «Աշխատանքի ձևեր բաժնին» ավելացնել «Տրանսպորտային խողովակներ» — Շողմեքենա, վաղմեններ, տրակտոր, տանկ, գրահակիր մեքենա»:

7. 8-րդ «Ժամանակակից շինարարական նյութեր» թեման հանել ծրագրից:

9-րդ «Աշխատանք դպրոցական հողամասում» թեման հանել և փոխադրել բնագիտության դասընթացը:

8. «Աշխատանք և արտադրության կազմակերպում» թեման ծրագրից հանել:

### ԶՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Ներածություն — հանել ծրագրից:

2. Առաջին «Ծանոթություն կոլտոզի և սովտոզի դաշտավորության հետ» թեման ծրագրից հանել:

3. Յերկրորդ «Առաջին աշխատանքները մետաղալարից և քիթից» թեման ծրագրից հանել:

4. Ծրագրում մտցնել նոր «կար և գործվածք» թեմա հետևյալ բովանդակությամբ — «ինչպես է պատրաստվում գործվածքը» (եքսկուրսիա տեքստիլ գործարանը, վորտեյ ալբ հնարավոր է): Ձեռքով և մեքենայով կարելու աշխատանքի շարունակությունը: Գործելը: Աշխատանքի որակները — պարզ ձևվածքներ և տրուսիկների, մայկաների, եքսկուրսիոն պայուսակների կարելը, հագուստի վերանորոգումը, գործվածք:

5. 3-րդ «Արտադրության մեջ մետաղն ինչպես է մշակվում» թեման ծրագրից հանել:

6. 4-րդ «Քամու շարժիչներ» թեման թողնել անփոփոխ:

7. 5-րդ «Ջրային և ջերմաշարժիչներ» թեմայից դուրս հանել «Ջերմաշարժիչներ և եքսկուրսիա դեպի ամտոգարած, պրակտոր վերանորոգող արհեստանոց, շոգեկառքի մոտ»՝ դրա վախարեն մտցնել «Եքսկուրսիա ջրաղաց և ջրաշարժիչներ»:



Թեմաների կրճատման առթիվ մտցնել «Տեխնիկական մոդել-լացում» բաժինը տեխնոլոգիաների հետեվյալ շրջանը՝ «Նշանա կում քանոնի և անկյունաչափի ողնությամբ, սանդղելը, շաղա-փով ծակելը, թիթեղի և մետաղալարի կտորների ծուռը տա-փակելու համար»:

8. 6-րդ «Ծանոթութուն փայտե մեքենայական մշակման հետ» թեման ծրագրից հանել:

9. 7-րդ «Ծանոթութուն ելեկտրականության կիրառման հետ» թեմայի «Գիտալիզմների ծավալը» բաժնից դուրս հանել «ու նի յերկու բեպեո, նույնանման բեկոներն իրար վանում են և ալլն» մինչև «Ունակութունների շրջան» բաժինը:

«Լաբարատոր աշխատանք» բաժինը հանել ծրագրից:

«Աշխատանքի ձևեր» բաժնից հանել «Նլեկտրաշարժիչի, սա-ղիո - ընդունիչի պարզ մոդելների համարումը պատրաստի մասե-րից»:

10. 8-րդ «Աշխատանք մանր անասնապահության գծով» թե-ման հանել և վտխադրել բնագիտության դասընթացը:

11. «Ծանոթութուն աշխատանքի կազմակերպման հետ մայր արտադրության մեջ» և «Աշխատանքի և արտադրության կազմա կերպումը» թեմաները հանել ծրագրից:

Նկատողություն — Ծրագրում ամեն մի բաժնի համար նշված է Ժամերը փոխել յեղնելով 1934—35 ուս. տար. ուսում նախան պլանում դրված Ժամաքանակից:

## ՏԱՐԲԱԿԱՆ ԳՊՐՈՑԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆ- ՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1-ին ԴԱՍԱՐԱՆ — 40 ԺԱՄ.

1. Առաջին աշխատանքները քրթի վրա — 14 ժամ  
ա) Գիտելիքների ծավալը. — Թղթի գլխավոր հատկություն-ները և արտաքին նշանները. դույնը (նեքկլած—չներկված), ամբությունը (փափուկ—կոշտ), հաստութունը (հաստ—բարակ):  
Թղթի դիմացկունութունը (հեշտ ճմույլում և, պատռվում և, ջուրը ծծում և, այրվում և):

Թղթի մշակման հիմնական ձևերը — ծալելը, պատռելը, կտրելը, սոսնձելը, կարելը:

Թղթի աշխատանքի համար գործածվող պարզ գործիքնե-րը — մկրատ, դանակ, մրձին սոսնձի համար, քանոն (20 սմ.) սակ:

բ) Ունակութունների շրջան. — Թղթի ծալելը և ծալված քով կարելը, մկրատով, դանակով կտրելը, իրար վրա սոսնձե-լը: Ըստ ձևի և ըստ շարունի թղթից դանազան իրրի մասեր նախորոք պատրաստելը: Թուղթն իրար կպցնելն ու թելերով կարելը: Երեչ պատրաստելը:

գ) Աշխատանքի ձևերը. — Աշխատանք: Ծարելու պարզ աշ-խատանք, որինակ՝ աղափնի, պարաշյուտ, ջրադաց, նախակ և ալլն: Թղթից տառեր և դարձեր կտրելը, սոսնձով իրար կպց-նելը՝ խորագրերի և նախշերի ձևով:

Սոսնձելու և կարելու ամնապարզ աշխատանքներ: Ծրար-նրի, տետրների, արբումնրի և ալլ իրերի պատրաստումը:

2. Կար և հյուսվածք — 14 ժամ

ա) Ունակութունների շրջան. — Կտրն ուղիղ դծով ձևե-լը: Ասեղ թելելը, թելի ծայրը կապելը, «ասողով ատաջ և յետ կարը»:

Թուլի, պարանի և կեղևաթելի աշխատանք. դանակով և մկրատով կտրելը, պարզ հանգույցներ կապելը:

Հագուստը խոզանակով մաքրելը:

բ) Աշխատանքի ձևերը. — Աշխատանք: Մանր իրեր — կրկնակոշիկ պարի, թաշկինակ և այլն կարելի. կոծակ, կախարան, կեռիկներ կպցնելը: Պատուած հագուստ մերանորոգելը:

Կեղևաթելից ու պարանից սանձ ու ցատկաթոկ հյուսելը: Գոտի հյուսելը և վրձին, փուշի ու ամանեղեն մաքրելու խողանակ պատրաստելը:

3. Տեխնիկական խաղալիք — 12 ժամ

ա) Գիտելիքների ծավալը. — Ինչպես են մարդիկ մի վայրից մյուս վայրը փոխադրվում՝ գետնի, ջրի վրա և ողուն, ուր և ինչ են տեղափոխում: Հաղորդակցութեան միջոցներ — տղրամիայ, հեծանիվ, չոգենամ, չոգեչարժ, ալերուլյան: Ամառային և ձմեռային կառքեր (սահնակ, սալ):

բ) Ունակուքյունների շրջան. — Փայտ ունեղեն ու դանակով կտրելը: Աղեղնաողոցի և ձեռնաողոցի արկղում լայնութեամբ ու թեք ուղղութեամբ սղոցելը: Փայտի մեջ մուրճով մեխ ամրացնելն ու արջանոյ դուրս բաշելը: Փայտի սովեհապարզ միացումները մեխով:

գ) Աշխատանքի ձևերը. — Աշխատանք: Փայտից, թերմաշակ տախտակներից, չորալիկներից, ուրիշ նյութերից (մետաղալար, բամբակ, պարան, կտորտանքներ) թափթիուկներից (տուփ, արկղ, բանկա) իրենց մանկապարտեզի, մանկահարպարակների համար փոխադրական խաղալիքներ պատրաստելը, որի նակ՝ նախիկ, չոգենամ, բեռնատար ավտո, ողանամ և այլն:

դ) Եփակարսիա (2 ժամ). — Դեպի յերկաթուղու կայարան կամ նավահանգիստ: Յերկաթուղու կայարանի պեղերի, սեմաֆորի, ջրհան մեքենայի դիտում: Ետեկտոքի կամ չոգենամի արտաքին կառուցվածքի ծանոթություն:

ե) Խաղեր (ազատ ժամանակ). — Փոխադրական խաղալիքների հետ (չոգեկառք, վագոն, չոգենամ, բեռնատար ավտո, կառուսել և այլն): Սմբակային խաղեր («գնացրի, տրամվախ»):

2-րդ ԳԱՍՍՐԱՆ — 40 ժԱՄ.

1. Կարտոնի առջին աշխատանքները — 14 ժամ.

ա) Գիտելիքների ծավալը. — Կարտոնի գործածությունը կենցաղի և արտադրություն մեջ. տուփեր, պատյաններ, գրքի կազմեր և այլն:

Կարտոնի համեմատությունը թղթի հետ: Կարտոնի տեսակները — փայտից, ծղոտից, փայտից: Այդ տեսակների արտաքին նշանները, նրանց ամրությունը և գործածությունը:

Կարտոնի մշակման յեղանակները՝ ձևելը, ծալելը, սոսնձելը, կարելը: Կարտոնի հատկությունը՝ սոսնձելիս մի կողմից կծկվելը, թրջվելից՝ ուռչելը:

Կարտոնի մշակման գործիքները — գանակ, մկրատ, (ձեռքի և լծակայր) քանոն, անկյունարդ, կարկեն, վրձին, հերլուն, ասեղ, ծակահատ և նրանց գործածությունը:

բ) Ունակուքյունների շրջան. — Պարզագույն նշում կարտոնի վրա՝ յեկյունարդի և քանոնի գործածությամբ: Եւրր կարտոնի ձևելը մկրատով և դանակով (ամրացած քանոնի ուղղութեամբ): Փոքր կարտոնակտրիչի ողտաղ շաճ ուրը, թղթի կպցնելը կարտոնին: Պարզագույն յեղրատում:

Կարտոնի միացումը կալենկորով և յերիզով: Կարտոնի ծակելը ճակահատով և սոսնձակայով:

գ) Աշխատանքի ձևերը. — Աշխատանք: Թուղթ կպցնելով կարտոնից ամենապարզ իրեր պատրաստելը, որինակ՝ ուսումնական պարագաներ (լուտո, աղյուսակներ, ժամացույց, թիպտախտակ և այլն), խաղեր, թղթակախներ, հուշատետրեր և այլն:

2-րդ կար — 14 ժամ

ա) Գիտելիքների ծավալը. — Հագուստի պատրաստման համար անհրաժեշտ նյութերը և նրանց անունները — գործվածք, տրիկոտաժ, բամբակ, մորթի, թել, կոծակ, կեռիկներ և այլն:

Գործվածքի հատկությունները — ջերմություն պահպանում, ամրություն: Տարբեր գործվածքներ և թելեր՝ բամբակի, բրդի, մետաքսի:

Հագուստի պատրաստման հիմնական սրոցեսները — ձևելը, կարելը, դրվագում:

բ) Ունակուքյունների շրջան. — Գործվածքի լայնութեան և յերկարութեան փոխշուժը: Թեք ձևելը: Կարելը հիմնական կարով՝ կրկնակի և թեք: Հագուստի պարզ վերանորոգում (կարկատելը):

գ) Աշխատանքի ձևերը. — Աշխատանք: Թղթի պարզ ձեղվածքների (փիրոյկի) պատրաստումը՝ քառակուսի (թաշկինակի համար), ուղղանկյունի (յերեսարիչ, դրատախտակի ջնջոցներ, գրքի պայուսակ), յեռանկյունի (պիտեբրական վզկապ, թաշկինակ, գրոշ, յերեսարիչ, կրկնակոշիկի պարկ, եքսկուրսիոն պայուսակ, հագուստի պարզ վերանորոգում և կոծակների կարելը: Հասարակ նշում կոծականցքի կարով և խաչով, պատրաստած իրերի վրա:

3-րդ Տեխնիկական խաղալիք — 12 ժամ

ա) Գիտելիքների ծավալը. — Բարձրահան պարզ մեքենաները և փոխադրական միջոցները — ջրհան, կուռնիկ, փոլորան, ճա

խալակ, միանիվ սայլակ, վազոնետկա, սայլ: Նրանց հիմնական մասերը — առանցք, առանցքակալ, անիվներ: Առանցքները յուզելու անհրաժեշտութունը:

բ) Ունակուրքյունների շրջան. — Տոլրիչույ և խարտոցով յեբեսից խարտոցելը: Հղիչ թղթով արտաքին մասերի դրվագումը: Շարժական կոնստրուկցիաների սարքավորման ունակութունները:

գ) Աշխատանքի ձևեր. — Աշխատանք: Ազատ կոնստրուկտիվ աշխատանք (թերամշակ տեսակավոր նյութերից և կոնստրուկտորի մասերից), դպրոցի և մանկապարտեզի համար խաղալիք — մոդելներ, որինակ՝ վոլորան, բարձրահան մեքենա, լիֆտ, սայլակ, վազոնետկա, միանիվ սայլակ և այլն պատրաստելը:

դ) Հարդարատնային աշխատանք — Արկղով ծանրութուններ տեղափոխելը հարթ տարածության վրա քաշելով, հրելով, անիվներով վրա դնելով:

3-րդ ԳԱՍԱՐԱՆ — 20 ժԱՄ.

1-ին Գիւրգն ինչպես է պատրաստվում

ա) Գիւրգնիքների ծավալը. — Գրքերը, լրագրերը, պրակատները, նկարները և նրանց նշանակութունը: Գրքի տպագրութունը տպարանում. տպագրական տատեր (չարելու տատեր), չարվածքը տպագրելու համար, տպագրական մեքենայի աշխատանքը (հիմնական գծերով): Կլիշեներից նկարներ և պատկերներ տպագրելը (փայտե կլիշեյի որինակով):

Տպագրության գյուտի սրտամությունը (Գուաներեքզի և Բվան Ֆյոդորովի առաջին տպագրական մեքենան):

բ) Ունակութունների շրջան. — Փոքրիկ հայտարարութուններ, խորագրերի, պատի թերթի բաժինների չարվածք՝ ինքնա գործ կարտոնի կամ պատրաստի կառուցչի տատերից և նրանց տպագրելն ուսումնական տպագրական պարզ հաստցի վրա: Պարզ կլիշենների պատրաստումը կարտոնից, լինոթեյումից, փայտից և նրանցով տպագրելը:

Բրոշյուրի նախապատրաստումը կազմելու համար (չապկի հանելը, կարի քանդելը, կազմի, արմատի և աստտի պատրաստումը):

Բրոշյուրի կարելը թելով և մետաղալարով: Բրոշյուրի կազմելը կարտոնի կողերի մեջ, շապկի կպցնելը և կարելը մամլակով:

Գրքի պարզ վերանորոգումը (թերթերը սոսնձով կպցնելը, կարելը):

գ) Աշխատանքի ձևեր. — Աշխատանք: Հասարակ տպագրական հաստցի վրա (հայտարարութունների, խորագրերի, պրակատների և այլն տպագրելը): Փայտի ներկելը փչացման դեմ: Բրոշյուրների և գրքերի կազմելն իր և դպրոցի գրադարանի համար:

դ) Հարդարատնային աշխատանք. — Տատերի և կլիշենների պատրաստում՝ կարտոնից, խցանից, լինոթեյումից (նայած թե ինչ կճարվի), տատերի չարվածքը և փորձնական տպագրութուն:

ե) Եֆսկուրսիա (2 ժամ). — Տպարան՝ դիտելու չարվածքը, տպագրելը, բրոշյուրով կան, կազմարարութունը: 2-րդ կար և հյուսվածք

ա) Աշխատանքի ձևեր. — Կարի մեքենայի խնամքը, յուշելը և մաքուր պահելը: Մեքենան կարգավորելը: Մանր իրերի ձևելը պատրաստի ձևի հիման վրա (տրուսներ, մայկաներ, ճամբորդական պայուսակ և այլն):

բ) Հյուսվածք. — Վաղեյրոյի ցանց, պայուսակներ, ձկնորսության անհրաժեշտ իրեր և գորգեր գունավոր գործվածքի կատրոնից:

գ) Եֆսկուրսիա. — Կարի Փարբիկա կամ սրհնատանոց: 3-րդ Տեխնիկական մոդելացում

